- ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ եզրակացության և սահմանված կարգով հաստատվելու:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.1)

206. Արբանյակային գեոդեզիական ցանցերի տեխնիկական նախագծերում բացի կետերի կոորդինատների բուն որոշումից, ընդգրկվում են աշխատանքների մի ամբողջ

համալիր միջոցառումներ՝ կապված ՀԱԳՑ, ԱԳՑ-1 կամ ԱԳՑ-2 համապատասխան հատվածի ստեղծման հետ, այսինքն.

- Արբանյակային գեոդեզիական ցանցերի տեխնիկական նախագծերում բացի կետերի կոորդինատների բուն որոշումից, ընդգրկվում են աշխատանքներ ԱԳՑ կետերի և պետական նիվելիրացման հենանիշների անհրաժեշտ լրացուցիչ տեղակայումների հետ կապված

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.2 , ա)

207. Արբանյակային գեոդեզիական ցանցերի տեխնիկական նախագծերում բացի կետերի կոորդինատների բուն որոշումից, ընդգրկվում են աշխատանքների մի ամբողջ համալիր միջոցառումներ՝ կապված ՀԱԳՑ, ԱԳՑ-1 կամ ԱԳՑ-2 համապատասխան հատվածի ստեղծման հետ, այսինքն.

- ընդգրկվում են աշխատանքներ ԱԳՑ-1 համապատասխան հատվածների տարածքում քվադրանտի բարձունքային մանրամասն քարտեզի ստեղծման

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.2 , գ)

208. Արբանյակային գեոդեզիական ցանցերի տեխնիկական նախագծերում բացի կետերի կոորդինատների բուն որոշումից, ընդգրկվում են աշխատանքների մի ամբողջ համալիր միջոցառումներ՝ կապված ՀԱԳՑ, ԱԳՑ-1 կամ ԱԳՑ-2 համապատասխան հատվածի ստեղծման հետ, այսինքն.

- ընդգրկվում են ծանրաչափական որոշումների աշխատանքներ ՀԱԳՑ կետերի վրա

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.2 , դ)

209. Նախքան ՀԱԳՑ, ԱԳՑ-1 և ԱԳՑ-2 հատվածի կառուցման տեխնիկական նախագծի կազմելն իրականացվում է եռանկյունավորման, նիվելիրացման և ծանրաչափական որոշումների, ինչպես նաև տվյալ տարածքում արբանյակային գեոդեզիական ցանցերի կառուցման նախօրոք կատարված աշխատանքների:

- նյութերի հավաքում և վերլուծում

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.3)

210. Արբանյակային գեոդեզիական ցանցերի տեղազննումն իր մեջ ընդգրկում է հետևյալ միջոցառումները.

- եռանկյունավորման կենտրոնների և նիվելիրացման հենանիշների վիճակի զննում, որոնց հետ նախատեսվում է համատեղել նախագծվող կետերը կամ որոնք նախատեսվում է տեղակապել արբանյակային ցանցի կրկին հիմնադրվող կետին:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.10 գ)

211. Արբանյակային գեոդեզիական ցանցերի տեղազննումն իր մեջ ընդգրկում է հետևյալ միջոցառումները.

- կետի հիմնական կենտրոնների և ստուգիչ հենանիշերի միջև գեոդեզիական կապերի հաստատման սխեմաների ընտրություն ավանդական կամ արբանյակային մեթոդներով

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.10 բ)

212. Կետերի տեղաբաշխման տարածքները զննելիս տեղազննողները պետք է ապահովեն

- դիտարկումների կատարման բարենպաստ պայմաններ, կետերի երկարաժամկետ պահպանում, մեծ ժամանակահատվածի համար պլանում և բարձրությամբ կենտրոնի կայունություն, աշխատելու հնարավորություն օրվա ցանկացած ժամին և ամբողջ տարին:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.13 ա)

213. Կետերի տեղաբաշխման տարածքները զննելիս որտեղ չի կարելի կետերը տեղաբաշխել:

- չի կարելի կետեր տեղաբաշխել հեռանկարային շինարարության և բնակավայրերի մեծացման տարածքներում, ինչպես նաև այն տեղամասերում, որոնք նախատեսված են շինարարական, հիդրոտեխնիկական, ճանապարհային և լեռնային աշխատանքների համար կամ այն տարածքներում, որտեղ հնարավոր են սողանքային և կարստային երևույթներ, ենթակա են հեղեղման կամ ողողահարման ու այլ տարածքներում, որտեղ կետի պահպանման երաշխիք չի կարող լինել:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.13 բ)

214. Կետերի տեղաբաշխման տարածքները զննելիս որտեղ չի կարելի կետերը տեղաբաշխել:

- չի կարելի կետեր տեղաբաշխել ռադիոկայանների, ռադարների, ռադիոհեռարձակման ալեհավաքների և այլ ռադիոճառագայթման հզոր աղբյուրների վրա:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.1.13 գ)

215. Արբանյակային գեոդեզիական ցանցի ԱԳՑ-1 կետերի նոր կենտրոնների հիմնադրման տեղերի ընտրությունը կամ էլ դրանց համատեղումը տեղանքում արդեն գոյություն ունեցող կենտրոնների հետ ինչպես է տեղի է ունենում

- տեղի է ունենում հորիզոնի նկատմամբ բարձրավայրերի 100-ից ավելի անկյան տակ արբանյակային ազդանշանների անցման խոչընդոտների բացակայության վերաբերյալ պահանջների պահպանմամբ:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.4.2)

216. Արբանյակային գեոդեզիական ցանցի նախագծման ժամանակ որն է համարվում աշխատանքային կենտրոն

- համարվում է այն հատուկ կենտրոնը, որն ապահովում է արբանյակային ալեհավաքների հարկադրական կենտրոնադրումը:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.4.4)

217. Արբանյակային գեոդեզիական ցանցի նախագծման ժամանակ աշխատանքային կենտրոնի տեղակայումը հիմնականին և ստուգիչին երբ է իրականացվում

- իրականացվում է ոչ շուտ, քան հիմնադրումից մեկ տարի անց:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.4.4)

218. Լճափնյա շրջաններում Արբանյակային գեոդեզիական ցանցի ԱԳՑ-1 կետերն ինչպես են համատեղվում:

- համատեղվում են գործող մակարդակային ստուգիչ կետերի հետ կամ էլ տեղաբաշխվում են դրանցից 1 կմ-ից ոչ ավելի հեռավորության վրա:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 3.4.5)

219. Արբանյակային գեոդեզիական ցանցի կենտրոնների տիպային կոնստրուկցիաներն ինչպես են ընտրում:

- ընտրում են հաշվի առնելով կլիմայական և ֆիզիկաաշխարհագրական պայմանները:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 4.1.3)

220. Ըստ հիմնադրման պայմանների հիմնական կատեգորիաների արբանյակային գեոդեզիական ցանցի կենտրոնները ինչ տեսակի են լինում

- լինում են գրունտային և ժայռային:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 4.1.4)

221. Արբանյակային դիտարկումները գրունտային և ժայռային կենտրոնների վրա երբ կարող են կատարվել

- ժայռային կենտրոնների վրա հիմնադրումից մի քանի օր անց, իսկ գրունտային կենտրոնների վրա՝ հաջորդ տարի:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 4.1.4)

222. Օգտագործման ենթակա արբանյակային ընդունիչները լինելով ստուգաչափված և հաստատված նորմատիվային պահանջներին համապատասխան ինչ պետք է ունենան:

- պետք է ունենան համապատասխան վկայագիր:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 6.1)

223. Արբանյակային ընդունիչների ստուգիչ դիտարկումների ժամանակ չափումների ընդհատությունը որքան ժամանակին հավասար է սահմանվում:

- չափումների ընդհատությունը սահմանվում է 15 վրկ-ին հավասար:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 6.4.3)

224. Արբանյակային ընդունիչների հաստատված պահանջների սարքավորումների համապատասխանության չափանիշ են հանդիսանում

- չափանմուշի և չափման արժեքների տարբերությունները և կրկնակի չափումների ու փակ պատկերների անհամապատասխանությունների տարբերությունները:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 6.6)

225. Արբանյակային գեոդեզիական ցանցի ԱԳՑ-0 կետերի պարբերական դիտարկումներն ինչպես են իրականացվում:

- իրականացվում են երկհաճախականի ընդունիչ կայաններով, որոնք համալրված են միատեսակ ալեհավաքներով

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 7.2.3)

226. Արբանյակային գեոդեզիական ցանցի ԱԳՑ-0 պարբերաբար որոշվող կետերի վրա միաժամանակյա դիտարկումների տևողությունը որքան պետք է կազմի՝

- միաժամանակյա դիտարկումների տևողությունը պետք է կազմի 5 օր
- (WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 7.2.5)**

227. Արբանյակային գեոդեզիական ցանցի ԱԳՑ-0 պարբերաբար դիտարկվող կետերի վրա բացարձակ ծանրության ուժի որոշումը երբ է կատարվում:

- կատարվում է արբանյակային դիտարկումների անցկացման պահից 1 տարուց ոչ ավելի ժամանակահատվածում
- (WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 7.2.6)**

228. Արբանյակային գեոդեզիական ցանցի ԱԳՑ-2 դասի կետերի դիտարկման յուրաքանչյուր հաջորդ փուլում առնվազը նախորդ փուլում դիտարկված կետերից քանի կետ են ներգրավվում:

- ներգրավվում են նախորդ փուլում դիտարկված առնվազն երկու կետ:
- (WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 7.4.3)**

229. Արբանյակային չափումների նախնական մշակման խնդիրների լուծման համար օգտագործվում են ծրագրային փաթեթներ, որոնք ինչ են թույլ տալիս որոշելու:

- որոնք թույլ են տալիս որոշել բազային գծերի տարածական վեկտորները, կատարել կետերի կոորդինատների հաշվարկ և հավասարակշռում:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 8.1.2)

230. Արբանյակային դիտարկումների նախնական մշակման նկատմամբ եղած պահանջներից են

- հորիզոնի նկատմամբ 150 և ավելի դիրք գրավող արբանյակներից ստացված դիտարկման տվյալների օգտագործում,
- (WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 8.1.6 ա)**

231. Արբանյակային դիտարկումների նախնական մշակման ժամանակ ինչ է անհրաժեշտ հաշվի առնել:

- անհրաժեշտ է հաշվի առնել ալեհավաքների ֆազային կենտրոնների կենտրոնացման շեղումները գեոդեզիական կետերի կենտրոնների նկատմամբ

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 8.1.7)

232. Արբանյակային գեոդեզիական ցանցի **ԱԳՑ-0** կետերի վրա դիտարկումների մշակման կարգն ինչպես է կանոնակարգվում

- կանոնակարգվում է հատուկ տեխնիկական նախագծերով:

(WGS-84 կոորդինատային համակարգում գեոդեզիական ցանցի կառուցման հրահանգը հաստատելու մասին կետ 8.2.1)

233. Ինչպես են հաշվարկված Գաուս-Կրյուգերի գլանային հավասարանկյուն լայնական պրոյեկցիայով ստեղծված տեղագրական քարտեզները

- վեցաստիճանային զոնայի համար ըստ Կրասովսկու էլիպսոիդի չափերի: (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 3.)

234. Որ համակարգում են հաշվարկված Գաուս-Կրյուգերի գլանային հավասարանկյուն լայնական պրոյեկցիայով ստեղծված տեղագրական քարտեզների բարձրությունները

- Բարձրությունները հաշվվում են Բալթյան 1977թվականի բարձունքային համակարգում: (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 3.)

235. Ավտոմատ համակարգում հաշվառելու համար ինչ են տրվում թերթերի վրա:

- Անվանակարգին կից տրվում են ծածկագրեր (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 4.)

236. Տեղագրական քարտեզների համար պլանային տեսակետից ինչը կարող է հիմք հանդիսանալ:

- պլանային տեսակետից՝ պետական գեոդեզիական ցանցի և հանութային ցանցի կետերը, որոնց ուղղանկյուն կոորդինատները հաշվարկված են ըստ Գաուս-Կրյուգերի հավասարանկյուն լայնական-գլանային պրոյեկցիայի՝ հաստատված կոորդինատային համակարգում:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 5. ա)

237. Տեղագրական քարտեզների համար բարձունքային տեսակետից ինչը կարող է հիմք հանդիսանալ:

- բարձունքային տեսակետից՝ նիվելիրային հենանիշերը և դրոշմանիշերը, պետական գեոդեզիական ցանցի կետերը, որոնց բարձրությունները որոշված են երկրաչափական կամ գեոդեզիական նիվելիրացմամբ, ինչպես նաև հանութային բարձունքային ցանցի և տեղական ցանցի կետեր որոնց բարձրությունները, բերված են ընդունված սկզբնական մակարդակի:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 5. բ)

238. Տեղագրական քարտեզների համար բովանդակության տեսակետից ինչ պայմաններ են անհրաժեշտ որ ապահովվեն:

- Անհրաժեշտ է բովանդակությամբ համաձայնեցված լինեն միմյանց հետ, ինչպես նաև յուրաքանչյուր մասշտաբի քարտեզների հարակից թերթերը միակցված լինեն բոլոր տարրերով,

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 2. դ)

239. Տեղագրական քարտեզների համար ծանրաբեռնվածության տեսակետից ինչ պայմաններ են անհրաժեշտ, որ ապահովվեն:

- ունենան այնպիսի ծանրաբեռնվածություն, գրաֆիկական և գունային ձևավորում, որոնք հնարավոր լինի քարտեզների վրա լրացուցիչ տեղեկատվություն անցկացնել:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 2. ե)

240. Որն է ստեղծվող քարտեզների խմբագրական աշխատանքների նպատակը

- Ստեղծվող քարտեզների խմբագրական աշխատանքների նպատակը բարձր որակի ապահովումն է, որպեսզի այդ քարտեզները լիարժեք համապատասխանեն իրենց նշանակությանը, մասշտաբին և իրենց առջև դրված խնդիրներին:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 14)

241. Քարտեզի ճշտությունն ապահովելու տեսակետից պատկերված առարկաների և ուրվագծված տարածքների միջին սխալները մոտակա հիմքի կետերի պատկերների նշանների և ուղղանկյուն կոորդինատային ցանցի գծերի նկատմամբ որ չափը չպետք է գերազանցի:

- չպետք է գերազանցեն 0.5մմ-ը, իսկ լեռնային, բարձր լեռնային և անապատային տարածքներում՝ 0.75մմ-ը:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 7)

242. Քարտեզի յուրաքանչյուր թերթի համար ինչ է անհրաժեշտ ունենալ

- տեղեկամատյան (ֆորմուլյար), որում նշվում է թերթի ստեղծման համար կատարվող աշխատանքի ողջ ընթացքը:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 13)

243. Ինչ նպատակով են ուսումնասիրում քարտեզագրական նյութերը և տեղանքը

- Քարտեզագրվող տարածքը և քարտեզագրական նյութերն ուսումնասիրվում են տեղանքի մասին տեղեկություններ ստանալու նպատակով, որոնք անհրաժեշտ են քարտեզի վրա տեղանքի պատկերման վերաբերյալ ցուցումներ մշակելու, քարտեզագրական նյութերի ընտրության և բարձր որակի քարտեզներ ստանալու համար՝ ժամանակի, աշխատուժի և միջոցների նվազագույն օգտագործմամբ:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 18)

244. Հիմնական քարտեզագրական նյութերն ընտրելիս առաջնությունը որ քարտեզներին է տրվում

- առաջնությունը տրվում է նորագույն խոշորամասշտաբ տեղագրական քարտեզներին: (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 19)

245. Որն է համարվում որպես հիմնական քարտեզագրական նյութ

- նոր խոշորամասշտաբ քարտեզները, որոնք հրատարակված են կոորդինատային և բարձունքային ընդունված համակարգերում և դրա մաթեմատիկական ու գեոդեզիական հիմքերի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս քարտեզագրվող տարածքն ապահովելու գեոդեզիական կետերով:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 20)

246. Եթե քարտեզի կազմումը կատարվում է այնպիսի քարտեզագրական նյութի հիման վրա, որի մաթեմատիկական ու գեոդեզիական հիմքը տարբերվում է ստեղծվող քարտեզի համար նախատեսված հիմքից, ապա ինչպես է կատարվում մանրամասն ուսումնասիրություն:

- որոշվում է քարտեզագրական պրոյեկցիան, քարտեզագրական ցանցի տեսքը, քարտեզագրական նյութի վրա երկայնությունների սկիզբը:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 20 ա)

247. Եթե քարտեզի կազմումը կատարվում է այնպիսի քարտեզագրական նյութի հիման վրա, որի մաթեմատիկական ու գեոդեզիական հիմքը տարբերվում է ստեղծվող քարտեզի համար նախատեսված հիմքից, ապա ինչպես է կատարվում մանրամասն ուսումնասիրություն:

- որոշվում է կոորդինատային համակարգը, որում հաշվարկված են գեոդեզիական կետերի կոորդինատները,

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 20 բ)

248. Եթե քարտեզի կազմումը կատարվում է այնպիսի քարտեզագրական նյութի հիման վրա, որի մաթեմատիկական ու գեոդեզիական հիմքը տարբերվում է ստեղծվող քարտեզի համար նախատեսված հիմքից, ապա ինչպես է կատարվում մանրամասն ուսումնասիրություն:

- որոշվում են քարտեզագրական նյութի վրա այն կետերը, որոնց կոորդինատները գտնվում են կատալոգներում,

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 20 գ)

249. Եթե քարտեզի կազմումը կատարվում է այնպիսի քարտեզագրական նյութի հիման վրա, որի մաթեմատիկական ու գեոդեզիական հիմքը տարբերվում է ստեղծվող քարտեզի համար նախատեսված հիմքից, ապա ինչպես է կատարվում մանրամասն ուսումնասիրություն:

- Որոշվում է քարտեզագրական նյութի պլանային հիմքի անցումն ընդունված կոորդինատային համակարգի և անցումային տարրերի ուղղումների մեծությունները:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 20 դ)

250. Եթե քարտեզի կազմումը կատարվում է այնպիսի քարտեզագրական նյութի հիման վրա, որի մաթեմատիկական ու գեոդեզիական հիմքը տարբերվում է ստեղծվող քարտեզի համար նախատեսված հիմքից, ապա ինչպես է կատարվում մանրամասն ուսումնասիրություն:

- որոշվում է բարձրությունների սկզբնական մակարդակը, քարտեզագրական նյութի գեոդեզիական կետերի արժեքների համապատասխանությունը կատալոգներում տրված արժեքների հետ, ընդունված բարձունքային համակարգին անցնելու կարգը:
(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 20 Ե)

251. Ինչ է նախապատրաստվում քարտեզագրվող տարածքի և քարտեզագրական նյութերի ուսումնասիրության արդյունքում

- նախապատրաստվում է տվյալ քարտեզագրվող տարածքի և այլ սխեմաների հակիրճ բնութագիրը և քարտեզագրական նյութերի բնութագիրը, որոնք անհրաժեշտ են խմբագրական ցուցումների համար:
(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 22)

252. Քարտեզի թերթերը կազմելուց առաջ խմբագիրն ինչ պարտավորվածություններ ունի

- Պարտավոր է քարտեզագիրներին ծանոթացնելու քարտեզագրվող տեղանքի առանձնահատկություններին և քարտեզագրական նյութերին, պարզաբանելու քարտեզի կազմման տեխնոլոգիայի առանձնահատկությունները ու տեղանքի առանձին տարրերի պատկերման վերաբերյալ խմբագրատեխնիկական հիմնական ցուցումները:
(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 28)

253. Թվային (էլեկտրոնային) քարտեզների հրատարակման ընթացքում խմբագրման էությունն ինչու է կայանում:

- Պարտավոր է քարտեզագիրներին ծանոթացնելու քարտեզագրվող տեղանքի առանձնահատկություններին և քարտեզագրական նյութերին, պարզաբանելու քարտեզի կազմման տեխնոլոգիայի առանձնահատկությունները ու տեղանքի առանձին տարրերի պատկերման վերաբերյալ խմբագրատեխնիկական հիմնական ցուցումները:
(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 33)

254. Պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդը ստեղծվում, պահպանվում և տեղեկատվությունը տրամադրվում է

- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից :
(ՀՀ պետական քարտեզագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 4)

255. Եթե քարտեզը կազմվում է այնպիսի նյութերից, որոնց կոորդինատային համակարգը տարբերվում է ընդունված կոորդինատային համակարգից, ապա ինչպես ենք ստուգում:

- այս դեպքում եղած նյութի վրա տվյալ համակարգում կառուցվում է ուղղանկյուն կոորդինատային ցանց և ըստ այդ ցանցի ստուգվում են հիմքի կետերի դիրքերը:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 65)

256. Քարտեզների վրա որ անվանումների մակագրություններն են զետեղվում:

- բնակավայրերի, երկաթուղային կայարանների, նավահանգիստների, ջրագրական օբյեկտների, ռելիեֆի, բուսական ծածկույթների և գրունտների անվանումները,
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 74 ա)

257. Քարտեզների վրա ինչպիսի պարզաբանող մակագրություններն են տրվում:

- Տրվում են ծառերի տեսակների, ճանապարհների ծածկանյութի որակը պարզաբանող մակագրություններ
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 74 բ)

258. Քարտեզների վրա ինչպիսի քանակական բնութագրիչներ են տրվում:

- Տրվում են բարձունքային նիշերի, հորիզոնականների մակագրությունների, գետերի լայնության ու խորության, ծառերի բարձրության ու բնի հաստության, ծառերի միջև հեռավորության, կամուրջների բեռնունակության քանակական բնութագրիչները:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 74 գ)

259. Հրոյական և յուրաքանչյուր հինգերորդ հիմնական հորիզոնականը քարտեզի վրա հաստացվում է, բացառությամբ 1:25 000 մասշտաբի քարտեզի ռելիեֆի որ անկման դեպքի:

- բացառությամբ 1:25 000 մասշտաբի քարտեզի ռելիեֆի 2.5 մ անկմամբ, որի վրա հաստացվում է յուրաքանչյուր 10-րդ հիմնական հորիզոնականը:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 217)

260. Տեղագրական Քարտեզի վրա ինչ տեսքով է ցույց տրվում թերթի շրջանակից դուրս եկող քարտեզագրական ցանցը:

- մեկական թուղթերի բաժանված միջօրեականների և զուգահեռականների տեսքով, իսկ թուղթանոց հատվածներն էլ իրենց հերթին բաժանվում են 10 վայրկյանանոց մասերի:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 84)

261. Քարտեզների թերթերի ներքին շրջանակից դուրս ինչպիսի կոորդինատներ են տրվում

- տրվում են շրջանակի անկյունների գագաթների աշխարհագրական կոորդինատները:
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 84)

262. Որ մասշտաբի քարտեզների թերթերի վրա են տրվում միջօրեականի և զուգահեռականի միջին հատումները և դրանց թվային արժեքներն աստիճաններով և թուղթներով:

- տրվում են 1:50 000 և 1:100 000 մասշտաբի քարտեզների թերթերի վրա:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 84)

263. Տեղագրական քարտեզների վրա որպես կանոն տրվում են նիվելիրային ցանցի որ կետերը:

- տրվում են հիմնական քարտեզագրական նյութի վրա եղած պետական նիվելիրային ցանցի բոլոր (բացառությամբ պատայինների և ժամանակավորների) դրոշմանիշերն ու հենանիշերը, ընտրություն է կատարվում միայն նիվելիրային ընթացքների վրա տեղադրված նշանների դեպքում, որոնց միջև հեռավորությունը քարտեզի մասշտաբով 3-4 սմ-ից պակաս է:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 87)

264. Գեոդեզիական կետերի պայմանական նշաններին կից քարտեզի վրա ինչ ճշտությամբ է բարձունքային նիշերը տրվում:

- տրվում են բարձունքային նիշեր, որոնց արժեքները վերցվում են գեոդեզիական կետերի կորդինատների կատալոգներից կամ կազմման համար հիմք հանդիսացող քարտեզից մինչև 0.1մ ճշտությամբ:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 88)

265. ինչպես են գծվում մեկ գծով պատկերվող գետերը

- Մեկ գծով պատկերվող գետերը գծվում են ակունքից գետաբերան աստիճանաբար հաստացնելով:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 104)

266. Քարտեզի վրա գետերի, լճերի, ջրամբարների, լճակների և մասշտաբի 1սմ քառակուսի և ավելի տարածք զբաղեցնող ջրավազանների ջրանիշերը ինչ ճշտությամբ են գրվում:

- ջրանիշերը գրվում են 0,1մ ճշտությամբ, որոնք պետք է համապատասխանեն
- գետերի, լճերի և լճակների ջրանիշերի միջին նվազագույն մակարդակին, իսկ ջրամբարների ջրանիշերը՝ նորմալ բարձրացման հորիզոնի մակարդակին:

գետերի, լճերի և լճակների ջրանիշերի միջին նվազագույն մակարդակին, իսկ ջրամբարների ջրանիշերը՝ նորմալ բարձրացման հորիզոնի մակարդակին:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 114)

267. Քարտեզների վրա որ բնակավայրերի տիպերն են ցույց տրվում:

- Քարտեզների վրա ցույց են տրվում քաղաքներն ու գյուղերը
- (Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 131):

268. Անբնակ բնակավայրերն ինչպես են ցույց տրվում տեղագրական քարտեզների վրա

- ցույց են տրվում սովորական բնակավայրերի նման, բայց անվան տակ փակագծերում տրվում է *անբնակ* մակագրությունը:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ I, կետ 154)

269. Ինչ նպատակով է կատարվում տեղագրական քարտեզների թարմացումը:

- Այն կատարվում է դրանց բովանդակությունը տեղանքի ժամանակակից վիճակի բերելու և կոորդինատային ընդունված համակարգով և գործող պայմանական նշաններով ձևավորելու նպատակով:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 325)

270. Ինչպես պետք է ընտրվեն Քարտեզների թարմացվելիք տարածքների սահմանները:

- թարմացվելիք տարածքների սահմանները պետք է ընտրվեն այնպես, որ կարճ ժամանակահատվածում հնարավոր լինի թարմացնել ողջ մասշտաբային շարքի քարտեզները :

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 328)

271. Ինչպես է հաստատվում քարտեզների թարմացման աշխատանքների տեխնոլոգիան և կազմակերպումը յուրաքանչյուր կոնկրետ տարածքի համար:

- հաստատվում է քարտեզի պլանաբարձունքային հիմքի մանրամասն վերլուծության, քարտեզի ստեղծումից հետո տեղանքի փոփոխությունների, թարմացվող քարտեզի սկզբնական նյութերի հիման վրա:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 329)

272. Թարմացվող քարտեզի ճշտության ստուգումն ինչ նպատակով է կատարվում

- կատարվում է թարմացման համար դրա պիտանելիությունը հաստատելու նպատակով:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 331)

273. Ինչ է մակագրվում քարտեզի թարմացում չպահանջող թերթերի տեղեկամատյանների կազմի և անվանաթերթի վրա

- մակագրվում է. Քարտեզի բովանդակությունը համապատասխանում է տեղանքի 20...թ. վիճակին:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 337.)

274. Քարտեզների թարմացման խմբագրական ցուցումները մշակվում են հրահանգի պահանջներին համապատասխան, որ նյութերի օգտագործման կարգը պետք է լրիվ արտացոլված լինի:

- գեոդեզիական, քարտեզագրական, տեղեկատվական և այլ նյութերի բնութագիրը և դրանց օգտագործման կարգը:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 339. ա.)

275. Քարտեզների թարմացման խմբագրական ցուցումները մշակվում են հրահանգի պահանջներին համապատասխան, որ նյութերի օգտագործման կարգը պետք է լրիվ արտացոլված լինի:

- թարմացվող քարտեզի թերթերի ստուգման վերաբերյալ տվյալները և տեղանքի փոփոխությունների վերլուծության արդյունքները՝ ներմուծված նոր քարտեզագրական նյութերից,

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 339. բ)

276. Քարտեզների թարմացման խմբագրական ցուցումները մշակվում են հրահանգի պահանջներին համապատասխան, որ նյութերի օգտագործման կարգը պետք է լրիվ արտացոլված լինի:

- քարտեզի վրա տեղանքի առանձին օբյեկտների և տարրերի պատկերման առանձնահատկությունները,

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 339. գ)

277. Քարտեզների թվայնացումը ընդգրկում է հետևյալ տեխնոլոգիական պրոցեսները.

- նյութերի նախապատրաստում, տեսաձրում (սկանավորում), թվայնացում ավտոմատ ռեժիմում, թվայնացում ինտերակտիվ ռեժիմում, միակցում, ստուգում, նյութերի հանձնում արխիվ:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 351)

278. Տեղագրական հանույթի նյութերով քարտեզները թվայնացնելիս խմբագիրը նախապես ինչ պետք է կազմի:

- պետք է ուսումնասիրի այդ նյութերը և դրանց հիման վրա կազմի քարտեզների թվայնացման հակիրճ խմբագրատեխնիկական ցուցումներ:

(Հրահանգ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզների կազմման, հրատարակման նախապատրաստման և թվայնացման. ՄԱՍ II, կետ 350)

279. Պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդը ՀՀ որ օրենքի պահանջներին համաձայն է ստեղծվում, պահպանվում և տեղեկատվությունը տրամադրվում

- Պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդը ստեղծվում, պահպանվում է և տեղեկատվությունը տրամադրվում է «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:

(ՀՀ պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 2)

280. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում նյութերն ու տվյալները ՌԻՄ կողմից է համալրվում և դուրս գրվում

- համալրվում և դուրս են գրվում կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից:

(ՀՀ պետական քարտեզագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 5)

281. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդը (տեղեկատվական բանկը) ինչպիսի տվյալների հիման վրա է ստեղծվում, համալրվում և թարմացվում

- պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդը ստեղծվում է պետական նշանակության քարտեզագրական և գեոդեզիական աշխատանքների իրականացման արդյունքում ստեղծված նյութերի և տվյալների հիման վրա:

(ՀՀ պետական քարտեզագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 6)

282. «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Որ տվյալներն են պահպանվում Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում

- պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների արդյունքում ստացված նյութերն ու տվյալները:

(ՀՀ պետական քարտեզագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 7)

283. Որքան ժամանակ են պահվում պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերն ու տվյալները պահվում են կոմիտեում՝ անժամկետ:

- պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերն ու տվյալները պահվում են կոմիտեում՝ անժամկետ:

(ՀՀ պետական քարտեզագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 8)

284. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերը և տվյալները ինչպես են տրամադրվում

- տրամադրվում են դիմումի ձևի համաձայն, կամ գրության հիման վրա, որտեղ նշվում են պահանջվող նյութի անվանումը, քանակը և այլ անհրաժեշտ տվյալներ:

(ՀՀ պետական քարտեզագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 10)

285. Ովքեր կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերից և տվյալներից

- կարող են օգտվել ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

(ՀՀ պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգ, կետ 11)

286. ՀՀ համայնքների վարչական տարածքների սահմանագծերի նկարագրման աշխատանքներն իրականացնելու համար հարթավայրային, նախալեռնային և լեռնային գոտիներում որպես հիմք որ մասշտաբի քարտեզներն ու հատակագծերն են ծառայում:

- հարթավայրային գոտիներում որպես հիմք ծառայում են 1:5000 տեղագրական և կադաստրային քարտեզները, իսկ նախալեռնային և լեռնային տարածքների համար 1:10000 տեղագրական քարտեզները:

(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ,

287. Որ փաստաթղթերն են համարվում Համայնքի կամ վարչատարածքային միավորի սահմանների վերաբերյալ իրավական փաստաթղթեր.

- Նախկին կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին և այլ պետական կազմակերպություններին հանձնված հողի օգտագործման իրավունքի պետական ակտերը, ՀՀ Գերագույն խորհրդի կողմից նախկին տարիների Նոր վարչական միավորների կազմավորումների հետ կապված որոշումների և հողօգտագործման սահմանների վերաբերյալ նյութերը, տարբեր տարիներին ՀՀ կառավարության կողմից կայացրած հող հատկացման կամ փոխանակման որոշումները, նախկին կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների խոշորացման կամ ապախոշորացման մասին որոշումները հատակագծային նյութերը, համայնքների վարչական սահմանների հետ կապված 1:500 – 1:200000 մասշտաբի տեղագրական, հողաշինարարական և կադաստրային քարտեզագրական նյութերը:

(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 2.1.)

288. Հանգուցային կետերի ընտրության ժամանակ նախապատվությունը որ կետերին է տրվում

- տրվում է հաստատուն, բնական կետերին, բլրի գագաթ, գեոդեզիական կետ , գետերի կամ ձորակների միացման կետ, ճանապարհների հատման կամ ամրակայված բնորոշ այլ կետեր:

(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 3.4)

289. Ինչպես են կոդավորվում և համարակալվում Հանգուցային կետերը

- Հանգուցային կետերը կոդավորվում և համարակալվում են սկսած համայնքի հյուսիս-արևմտյան անկյունից ժամացույցի սլաքի ուղղությամբ:

(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 3.5)

290. Յուրաքանչյուր երկու սահմանակից համայնքների համար ինչպես է կազմվում սահմանագիծը

- կազմվում է սահմանագծի մեկ տարբերակ և անց է կացվում տեղագրական 1:5000 կամ 1:10000 քարտեզների վրա:

(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 3.6)

291. Քանի մմ շրջանակով են ցույց տրվում բոլոր շրջադարձային սահմանակետերը:

- 2

(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 3.8)

292. Ինչ է կցվում տեխնիկական նախագծին

- տեխնիկական նախագծին կցվում է համապատասխան մասշտաբով նշահարման գծագիր,
(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 5.6)

293. Համաձայն տեխնիկական նախագծի պահանջների սահմանանիշերի հետ կապված ինչպիսի պահանջ ունենք

- տեղանքում ամրացվում են սահմանանիշերը և կատարում դրանց արտաքին ձևավորումը:
(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 6.1)

294. Ինչ եղանակով է հաշվարկվում վարչական միավորի տարածքի մակերեսը

- Սահմանանիշերի կոորդինատների տվյալների հիման վրա ծրագրային փաթեթների օգնությամբ անալիտիկ եղանակով
(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 6.6)

295. Աշխատանքներն ավարտելուց հետո ինչ փաստաթղթեր են կազմվում

- կազմվում է կատարված աշխատանքների իրականացման տեխնիկական հաշվետվություն 4 օրինակից, որից 1 օրինակը հանձնվում է կադաստրի կոմիտե, 2-րդ օրինակը պատվիրատուին
(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 6.7)

296. Դաշտային չափման արդյունքների հիման վրա հիմնային կետերի կոորդինատները, որ կոորդինատային համակարգում են հաշվարկվում:

- հաշվարկվում են ծրագրային փաթեթների օգնությամբ պետական գեոդեզիական կոորդինատային համակարգում
(Հրահանգ ՀՀ վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման Հրահանգ, կետ 6.5)

297. Ինչ բան է քարտեզների և հատակագծերի անվանակարգը

- Քարտեզների և հատակագծերի համարակալումը միևնույն համակարգում անվանում են անվանակարգ՝ նոմենկլատուրա

(Տեղագրական քարտեզների և հատակագծերի թերթերի անվանակարգը սահմանելու կարգ, կետ 2.2)

298. Ինչ պետք է ունենան տեղագրական քարտեզների և հատակագծերի առանձին թերթերը

- անհրաժեշտ է, որպեսզի դրանց առանձին թերթերն ունենան անվանումներ

(Տեղագրական քարտեզների և հատակագծերի թերթերի անվանակարգը սահմանելու կարգ, կետ 2.1)

299. Ինչպես է որոշվում տեղագրական քարտեզների և հատակագծերի թերթերի անվանակարգը

- Որոշվում է քարտեզների և հատակագծերի իրար նկատմամբ ունեցած փոխադարձ դիրքը երկրի մակերևույթի նկատմամբ

(Տեղագրական քարտեզների և հատակագծերի թերթերի անվանակարգը սահմանելու կարգ, կետ 2.3)

300. Ինչ է իրենից ներկայացնում 1:1000000 մասշտաբի տեղագրական քարտեզները

- Միջօրեականների 6 աստիճանի և զուգահեռականների 4 աստիճանի աղեղներով սահմանափակված երկրի մակերևույթի որոշակի սֆերոիդիկական սեղանի պատկերումը հարթության վրա

(Տեղագրական քարտեզների և հատակագծերի թերթերի անվանակարգը սահմանելու կարգ, կետ 2.4)

301. Ինչքան է կազմում պոլիգոններում և գծերում թույլատրելի անկապքը նիվելիրացման I I դասի

- **5մմ/լ**

I, II, III, IV

86-

2007

Չափագրում (հաշվառում)

1. Ի՞նչ է շենքը.

Կրող, պարփակող կամ համակցված /կրող և պարփակող/ կոնստրուկցիաներից կազմված վերգետնյա փակ ծավալ կազմող շինարարական համակարգ՝ նախատեսված մարդկանց բնակվելու կամ ժամանակավոր գտնվելու և տարբեր աշխատանքային ու արտադրական պրոցեսներ կատարելու համար /կախված ֆունկցիոնալ նշանակությունից/:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

2. Ի՞նչ է շինությունը.

Բնական կամ արհեստական նյութերից, երկրի վրա, ստորերկրյա կամ վերերկրյա կառուցված ծավալային, հարթային կամ գծային շինարարական համակարգ՝ կազմված կրող, որոշ դեպքերում նաև պարփակող կոնստրուկցիաներից և նախատեսված բնակվելու, տարբեր տեսակի արտադրական ու այլ աշխատանքային պրոցեսների կատարման, նյութերի, շինվածքների ու սարքավորումների տեղադրման կամ պահեստավորման, մարդկանց ու բեռների տեղափոխման, պաշտպանական և այլ նպատակների համար:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

3. Ո՞րոնք են ըստ նպատակային նշանակության շենք, շինությունների տեսակները.

Բնակելի, հասարակական, արտադրական:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

4. Ո՞ր շինություններն են համարվում բնակելի:

Մարդկանց բնակության համար նախատեսված շինությունները, բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

5. Ո՞ր շինությունն է համարվում բնակարան:

Շենքում գտնվող առանձին տարածքը՝ բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

6. Ո՞ր շինությունն է համարվում բազմաբնակարան բնակելի շենք:

Մեկից ավելի առանձին բնակարաններ ունեցող կառույցը:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

7. Ո՞ր շինությունն է համարվում բնակելի տուն:

Բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված, առանձին փոստային համար ունեցող, օժանդակ և կոմունալ հարմարություններով, իր տնտեսական շինություններով կառույցը:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

8. Ո՞ր շինությունն է համարվում այգետնակ:

Այգեգործական զանգվածում առանձին հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

9. Ո՞ր շինություններն են համարվում հասարակական նշանակության:

Բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շենքերը, շինությունները:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

10. Ինչպե՞ս են դասակարգվում արտադրական նշանակության շենքերը և շինություններն ըստ գործառնական նշանակության:

Արդյունաբերական, գյուղատնտեսական:

«Քաղաքաշինության նախարարության և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 26.05.98թ. թիվ 108-Կ հրաման

11. :

բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա, այդ թվում նաև կառուցվող շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին «Օրենքում փոփոխություն կատարելու մասին» «Օրենքի 2-րդ հոդված

12. Ի՞նչ է անշարժ գույքի միավորը:

Միասնական տարածական ամբողջություն կազմող գույքի մասը, որը հանդիսանում է մեկ, իսկ ընդհանուր սեփականության դեպքում՝ մեկից ավելի անձանց սեփականության կամ այլ գույքային իրավունքների օբյեկտ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին «Օրենքում փոփոխություն կատարելու մասին» «Օրենքի 2-րդ հոդված

13. Ի՞նչ է անշարժ գույքի օբյեկտը:

Իրենց նպատակային նշանակությամբ անբաժանելի անշարժ գույքի միավորներ են, որոնք կարող են սահմանակից չլինել, սակայն իրենց նպատակային օգտագործմամբ անբաժանելի են միմյանցից որպես ինժեներական, գծային, ճանապարհային, մայրուղային և այլ համակարգեր ու ենթակառուցվածքներ:

<<Գույքի նկատմամբ իր. պետ. գրանցման մասին << օրենքում փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 2-րդ հոդված

14. Ո՞վ է հանդիսանում անշարժ գույքի իրավատեր:

Այն սուբյեկտը, որի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եղանակով ձեռքբերված գույքի նկատմամբ իրավունքը օրենքով սահմանված կարգով դեռևս պետական գրանցման չի ենթարկվել:

<<Գույքի նկատմամբ իր. պետ. գրանցման մասին << օրենքում փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 2-րդ հոդված

15. Ի՞նչ է հողամասի հատակագիծը:

Օգտագործման համար սահմանված մասշտաբով գծված հողամասի տեղագրական գծագիրն /քարտեզն/ է, որում, տվյալ հողամասի սահմաններում, վերջին նկարահանման /հանութագրման/ պահին և հողաշինարարության վերջին նախագծին համապատասխան, պատկերված են հողամասի իրավիճակը և սահմանները:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին << օրենքում

փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 2-րդ հոդված

16. Ի՞նչ է շինության հատակագիծը:

Շենքի, շինության հարկերի հորիզոնական կտրվածքի, իսկ առանձին կանգնած շենքերի, շինությունների դեպքում նաև հողամասում դրանց տեղադրության՝ որոշակի մասշտաբով և պայմանական նշաններով արտապատկերումն է:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին << օրենքում

փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 2-րդ հոդված

17. Ի՞նչ է կադաստրային քարտեզը /հատակագիծը/:

Տեղանքի փոքրացված և ընդհանրացված արտապատկերումն է համապատասխան մասշտաբով և պայմանական նշաններով, որում պատկերված են անշարժ գույքի միավորները, դրանց տեղադրությունը, սահմանները, մակերեսը, տեսքերն ու տեսակները, վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցությունների ցանցերը և այլ տվյալներ:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին << օրենքում

փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 14-րդ հոդված 1-ին կետ

18. Ի՞նչն է հիմք հանդիսանում տեղանքում հողամասի սահմանները սահմանանիշերով ամրացնելու համար:

Անշարժ գույքի միավորի /հողամասի/ սահմանների շրջադարձային /բեկման/ կետերի կոորդինատները:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին

<< օրենքում փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 15-րդ հոդված 1-ին մաս

19. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է սահմանում անշարժ գույքի սահմանների որոշման եղանակը, դրանց ճշտության նկատմամբ տեխնիկական պահանջներն ու սահմանանիշերի ձևերը:

Անշարժ գույքի պետական ռեգիստրը:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին

<< օրենքում փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 15-րդ հոդված 2-րդ մաս

20. Ովքե՞ր կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն:

Պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձինք:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին << օրենքում

փոփոխություն կատարելու մասին>> << օրենքի 16-րդ հոդված 1-ին մաս

21. Ո՞ր մարմինն է սահմանում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները, որակավորման անցկացման կարգն ու պայմանները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդված 2-րդ մաս

22. Ո՞ր մարմինն է սահմանում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության որակավորման վկայականի ձևը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդված 2-րդ մաս

23. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ գրանցող մարմինը պատասխանատվություն կրու՞մ է արդյոք քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության աշխատանքների իրականացման որակավորում ստացած անձանց աշխատանքների որակի և տվյալների հավաստիության համար:

1.Պատասխանատվություն չի կրում որակավորում ստացած անձանց աշխատանքների որակի և տվյալների հավաստիության համար:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդված 3-րդ մաս

24. Ու՞մ միջոցների հաշվին են իրականացվում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության աշխատանքները:

Անշարժ գույքի սեփականատիրոջ /օգտագործողի/ միջոցների հաշվին:

<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդված 4-րդ մաս

25. ՀՀ հողային ֆոնդը քանի՞ նպատակային նշանակության (կատեգորիաների) է դասակարգվում:

1. 9 կատեգորիաների:

<< հողային օրենսգիրք հոդված 6 մաս 1

26. Ի՞նչ է հողերի նպատակային նշանակությունը:

Որոշակի նպատակների համար հողերի օգտագործման և շահագործման պայմանների, հատկանիշների և առանձնահատկությունների համալիրն է:

<< հողային օրենսգիրք հոդված 7 մաս 1

27. Ո՞ր մարմինն է սահմանում և փոփոխում հողերի նպատակային նշանակությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինները՝ կառավարության սահմանած կարգով:

<< հողային օրենսգիրք հոդված 3

28. Ի՞նչ է հողատեսքը:

1. Գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերի այն հատկանիշների համալիրն է, որը բնութագրում է դրանց գործառնական օգտագործումը:

<< հողային օրենսգիրք հոդված 7 մաս 3

29. Ի՞նչ հողատեսքերի են բաժանվում գյուղատնտեսական նշանակության հողերը:

Վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտներ և այլ հողատեսքեր:

<< հողային օրենսգիրք հոդված 9 մաս 2

30. Ու՞մ և ի՞նչ կարգով է իրականացվում գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերի փոխադրումն ավելի ցածրարժեք հողատեսքերի:

Համայնքի ղեկավարի թույլտվության հիման վրա՝ կառավարության սահմանած կարգով:

<< հողային օրենսգիրք հոդված 9 մաս 4

31. Ինչպիսի՞ հողատեսքերի են բաժանվում անտառային հողերը:

Անտառներ, վարելահողեր, խոտհարքներ, արոտներ, թփուտներ և այլ հողեր:

<< հողային օրենսգիրք հոդված 25 մաս 3

32. Ու՞մ որոշմամբ է իրականացվում գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքերի փոխադրումը ավելի բարձրարժեք հողատեսքի:

Համայնքի ղեկավարի որոշմամբ:

<< կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշում, կետ 7

33. Քանի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում բնակավայրերի հողերը:
5 գործառնական նշանակությունների:
« հողային օրենսգիրք հոդված 10 մաս 2
34. Քանի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում հատուկ պահպանվող հողերը:
4 գործառնական նշանակությունների:
« հողային օրենսգիրք հոդված 19 մաս 2
35. Ինչպիսի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում բնակավայրերի հողերը:
Բնակելի, հասարակական, խառը կառուցապատման, ընդհանուր օգտագործման և այլ հողեր:
« հողային օրենսգիրք հոդված 10 մաս 2
36. Որո՞նք են համարվում խառը կառուցապատման հողեր:
Բնակելի, հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման հողերի այնպիսի համադրությամբ կազմավորված տարածքները, որտեղ դրանցից որևէ մեկը գերակշիռ նշանակություն չունի:
« հողային օրենսգիրք հոդված 10 մաս 6
37. Որո՞նք են համարվում բնակավայրի այլ հողեր:
Բնակելի, հասարակական, խառը կառուցապատման և ընդհանուր օգտագործման համար նախատեսված, սակայն դեռևս չկառուցապատված ազատ հողերը:
« հողային օրենսգիրք հոդված 10 մաս 8
38. Ի՞նչ կատեգորիայի հողեր կարող են լինել բնակավայրի սահմաններում:
Հողային ֆոնդի կազմում առկա բոլոր հողերը:
« հողային օրենսգիրք հոդված 11 մաս 2
39. Հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում ո՞վ կամ ո՞ր մարմինն է ընդունում համապատասխան որոշում գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ:
Համայնքի ղեկավարը:
« կառավ. 2009թ. որոշում N1066 կետ 5
40. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում մաքրման կայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:
Կոմունալ ենթակառուցվածքների:
« հողային օրենսգիրք հոդված 18
41. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում անհատական բնակելի տների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:
Բնակելի կառուցապատման:
« հողային օրենսգիրք հոդված 10, մաս 4
42. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում օդանավակայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:
Տրանսպորտի:
« հողային օրենսգիրք հոդված 17, մաս 1
43. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում հիդրոէլեկտրակայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:
Էներգետիկայի:
44. Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում գերեզմանոցները:
Պատմական և մշակութային հողերի:
« հողային օրենսգիրք հոդված 23 մաս 1
45. Ի՞նչ է հողամասի սերվիտուտը:
Մեկ կամ մի քանի սեփականատերերի հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունքն է:
« հողային օրենսգիրք հոդված 50 մաս 1

46. Քանի՞ տարի կարող է սահմանվել պետության և համայնքի սեփականության հողերի կառուցապատման իրավունքով տրամադրման առավելագույն ժամկետը:

Չի կարող գերազանցել 99 տարին:

47. Ի՞նչ կարգով կարող են օտարվել պետական սեփականության հողամասերը:

Սեփականության իրավունքի անհատույց փոխանցելու, ուղղակի վաճառքի, աճուրդի միջոցով:

48. Ովքե՞ր կամ ո՞ր մարմինն է վարձակալության իրավունքով տրամադրում համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը:

Համայնքների ղեկավարը:

«Հողային օրենսգիրք հոդված 76 մաս 2

49. Ո՞վ է իրականացնում հսկողություն հողօգտագործողների կողմից հողային օրեսդրության պահանջների կատարման և հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ:

Համայնքի ղեկավարը:

«Հողային օրենսգիրք հոդված 43 մաս 1

50. Ի՞նչ են ներառում Հայաստանի Հանրապետության տարածքում չափագրման (հաշվառման) աշխատանքները:

Հողամասերի, շենքերի, շինությունների չափագրման աշխատանքներ:

«Հողաւարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

51. Ովքե՞ր կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում զբաղվել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքներով:

Ֆիզիկական անձինք, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստացել են համապատասխան որակավորման վկայական:

«Հողաւարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

52. Ի՞նչ իրավական կարգավիճակով կարող են գործունեություն իրականացնել որակավորման վկայական ստացած ֆիզիկական անձինք:

• **Որպես անհատ ձեռնարկատերեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվելուց հետո:**

«Հողաւարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 1

53. Ո՞ր իրավաբանական անձինք կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում զբաղվել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքներով:

Իրավաբանական անձինք, համապատասխան որակավորում ունեցող առնվազն մեկ հիմնական աշխատողի առկայության դեպքում՝ հաշվառման նպատակով համապատասխան փաստաթղթերը՝ որակավորման վկայականի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենները, ինչպես նաև գործունեության վայրի և հեռախոսահամարի վերաբերյալ տվյալները կոմիտե ներկայացնելուց հետո:

«Հողաւարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

54. Ի՞նչ իրավունքներ ունի Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքներ իրականացնող անձը:

ատվիրատուից պահանջելու կատարվող աշխատանքներին վերաբերող անհրաժեշտ նյութերը, գործունեությունն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով կոմիտեի համակարգից ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն, մասնակցելու կոմիտեում իր գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և ծանոթանալու հարցերին առնչվող բոլոր փաստաթղթերին:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

55. Ո՞ր օրենքներով է պարտավոր դեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքներ իրականացնող անձը իր գործունեության ընթացքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

56. Չափագրման աշխատանքների իրականացման համար օգտագործվող գործիքներն ու սարքավորումները ե՞րբ են ներկայացվում չափաբանական ապահովման և սերտիֆիկացման:

- **Յուրաքանչյուր տարին մեկ անգամ:**

ՀՀ կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 1

57. Ինչպիսի՞ր և որտեղի՞ց պետք է ձեռք բերի Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքներ իրականացնող անձը պատվիրված յուրաքանչյուր միավոր անշարժ գույքի (բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերի ծավալում տեղակայված անշարժ գույքերի միավորների) նկատմամբ իրականացվող աշխատանքների համար:

Կոմիտեի համակարգից ձեռք բերել անհրաժեշտ ելակետային տվյալներ գեոդեզիական ցանցի կետերի վերաբերյալ և տվյալ տարածքի կադաստրային քարտեզը:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

58. Ի՞նչ տարբերակով է պարտավոր աշխատանքները պատվիրատուին ներկայացնել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձը:

Թղթային տարբերակով և համապատասխան ծրագրով կազմված թվային (էլեկտրոնային) կրիչներով՝ կցելով իր կամ աշխատանքն իրականացնող մասնագետի որակավորման վկայականի պատճենը:

ՀՀ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

59. Ու՞մ պահանջի դեպքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձը պետք է ներկայացնի վկայականի բնօրինակը:

Պատվիրատուի պահանջի դեպքում:

60. Ի՞նչ օրենսդրական ակտով է սահմանվում Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման անցկացման կարգն ու պայմանները:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

ՀՀ կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 2

61. Ո՞ր մարմնի կողմից է անցկացվում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուների որակավորումը և տրամադրվում որակավորման վկայականները:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<< կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

62. Ո՞ր մարմինն է կազմակերպում և իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուների որակավորման անցկացումը:

Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 2

63. Ովքե՞ր կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովի կազմում:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցիչները:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 2

64. Ի՞նչ կարգով են նշանակվում Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովի անդամները:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի համապատասխան հրամանով:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 2

65. Ո՞ր մարմինն է կասեցնում կամ դադարեցնում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի գործողությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 2

66. Ո՞ր մարմինն է որոշում հայտատուների մասնագիտական որակավորման անցկացման վայրը, օրը, ժամը:

Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 2

67. Ո՞ր մարմինն է ամփոփում է որակավորման արդյունքները և կազմում եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում, հավելված 2

68. Որ մարմինն է որակավորման վկայականի գործողության կասեցման կամ դադարեցման մասին եզրակացություն է տալիս կոմիտեի նախագահին.

Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում, հավելված 2

69. Ո՞վ է հրապարակում որակավորման անցկացման մասին հայտարարությունը:

Որակավորման անցկացման աշխատանքները նախապատրաստող աշխատակազմը:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում, հավելված 2

70. Ե՞րբ և որտե՞ղ է հրապարակվում որակավորման անցկացման մասին հայտարարությունը:

Հայտարարությունը հրապարակվում է որակավորումն անցկացվելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ կոմիտեի պաշտոնական կայք-էջում:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում, հավելված 2

71. Ե՞րբ կարող է կոմիտեի կայք-էջից հանվել որակավորման անցկացման մասին հայտարարությունը:

Հայտարարությունը հանվում է կայք-էջից որակավորման անցկացման օրվանից ոչ շուտ:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

72. Որակավորում ստանալու համար հայտատուները ու՞մ անունով են ներկայացնում գրավոր դիմումը:

Կոմիտեի նախագահի անունով:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

73. Ինչպե՞ս է հայտատուն ներկայացնում փաստաթղթերը:

Հայտատուն փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

74 . Որակավորման անցկացման համար դիմած յուրաքանչյուր հայտատու ե՞րբ կարող է հրաժարվել որակավորմանը մասնակցելուց:

Որակավորման անցկացման օրվանից առնվազն մեկ օր առաջ գրավոր հրաժարվել որակավորմանը մասնակցելուց:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

75. Հանձնաժողովը մինչև թեստավորման փուլի սկիզբը գումարած նիստում ինչպիսի՞ որոշում է ընդունում:

Քննության է առնում որակավորման ներկայացած հայտատուների փաստաթղթերը և ընդունում համապատասխան որոշում որակավորման մասնակցելու թույլտվություն տալու մասին:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

76. Հանձնաժողովը որակավորման մասնակցելու թույլտվություն տալու մասին որոշումը ե՞րբ է հրապարակում:

Որոշումը հրապարակվում է մինչև թեստավորման փուլի սկիզբը:

«Վարչական կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

77. Ովքե՞ր կարող են դիմել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում մասնագիտական որակավորում ստանալու համար:

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն կամ քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման), հողաշինարարության գործունեության բնագավառներից որևէ մեկում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

«Վարչական կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

78. Ո՞րն է քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման անցկացման նպատակը:

Ստուգել դիմողների՝ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքները:

«Վ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

79. Ե՞րբ է դադարեցվում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում մասնագիտական որակավորում ստանալու համար մասնակիցների մուտքը թեստավորման անցկացման սենյակ:

Թեստավորումը սկսվելուց 5 րոպե առաջ:

80. Որակավորման ստուգման ժամանակ հայտատուին թույլատրվում է արդյոք իր հետ սենյակ ներս բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր, տեխնիկական այլ սարքեր, թեստավորման առաջադրանքների կատարման համար աղբյուր հանդիսացող այլ միջոցներ:

Արգելվում է:

«Վ կառավարության 29.10.2011թ. թիվ 1441-Ն որոշում

81. Ո՞վ է բացատրում որակավորման մասնակիցներին թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը:

Հանձնաժողովի քարտուղարը:

82. Ո՞վ և ե՞րբ է հայտարարում է թեստավորման սկիզբը:

Հանձնաժողովի քարտուղարը՝ թեստավորման առաջադրանքների թղթային տեքստերը մասնակիցներին տրամադրելուց հետո:

«Վ կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում

83. Ինչպիսի՞ նշում կարող է կատարել մասնակիցը թեստավորման առաջադրանքներում:

Կարող է կատարել ցանկացած նշում, որոնք արդյունքների գնահատման հիմք չեն և չեն կարող վկայակոչվել՝ արդյունքների գնահատումը բողոքարկելիս:

«Վ կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում

84. Ո՞վ և ե՞րբ է մասնակիցներին հիշեցնում է, թե որքան ժամանակ է մնացել առաջադրանքի կատարման համար:

Հանձնաժողովի քարտուղարը՝ թեստավորման ավարտից 10 րոպե առաջ:

«Վ կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում

85. Ի՞նչ փուլերով է իրականացվում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորումը:

Երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

«Վ կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում

86. Քանի՞ միավոր է գնահատվում թեստավորման արդյունքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանը:

Գնահատվում է մեկ միավոր:

«Վ կառավարության 29.09.2011թ. թիվ 1441 որոշում

87. անի՞ է բաղկացած մասնագիտական որակավորման թեստավորման նպատակով տրվող հարցաթեստը:

80 հարցերից:

88. Ի՞նչ բնույթի հարցերից է բաղկացած մասնագիտական որակավորման թեստավորման նպատակով տրվող անհատական հարցաթեստը:

«Վ օրենսդրության բնագավառի հարցերից:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

89. Ո՞վ է հայտարարում յուրաքանչյուր մասնակցի հավաքած միավորները (տոկոսը):

Հանձնաժողովի նախագահը:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

90. Ե՞րբ է հանձնաժողովը հրապարակում թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը:

Մասնակիցների հավաքած միավորների (տոկոսները) հայտարարումից անմիջապես հետո:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

91. Ե՞րբ կարող են բողոքարկվել թեստավորման արդյունքները:

Թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշի հրապարակումից հետո մեկ ժամվա ընթացքում:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

92. Ո՞ր դեպքում է հայտատուն համարվում թեստավորման փուլն անցած:

Թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում:

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

93. Որքա՞ն ժամանակ է հատկացվում թեստավորման փուլում յուրաքանչյուր հայտատուին:

- **120 րոպե:**

94. Ինչպե՞ս է անցկացվում մասնագիտական որակավորման հարցազրույցի փուլը:

- **Հարցատոմսերով:**

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

95. Քանի՞ հարց է պարունակում մասնագիտական որակավորման հարցազրույցի հարցաթերթիկը:

- **5**

96. Ինչպե՞ս են գնահատվում մասնագիտական որակավորման հարցազրույցի արդյունքները որակավորման հանձնաժողովի անդամների կողմից:

- **Հարցատոմսի յուրաքանչյուր հարցին պատասխանելուց հետո հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մասնակցի պատասխանը գնահատում է դրական կամ բացասական:**

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

97. Ե՞րբ է հայտատուն համարվում հարցազրույցն անցած:

- **Հանձնաժողովի անդամների պարզ մեծամասնության դրական գնահատականների կամ դրական և բացասական գնահատականների հավասար քանակության դեպքում:**

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

98. Հարցազրույցի փուլն անցած հայտատուին ե՞րբ և ու՞մ կողմից է տրվում մասնագիտական որակավորման վկայական:

- **Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, աշխատակազմի կողմից հայտատուին տրվում է որակավորման վկայական:**

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

99. Ե՞րբ և ի՞նչ կարգով հայտատուները կարող են բողոքարկել որակավորման արդյունքները:

- **Գրավոր բողոքը պետք է տրվի որակավորման արդյունքները հրապարակվելուց հետո մեկ ժամվա ընթացքում՝ աշխատակազմին:**

<< կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

100. Քանի՞ անձից է կազմված մասնագիտական որակավորման հանձնաժողովը:

- **7 անձից՝ նախագահից, քարտուղարից և անդամներից:**

101. Ե՞րբ են իրավագոր մասնագիտական որակավորման հանձնաժողովի նիստերը:

- **Եթե դրանց մասնակցում են անդամների կեսից ավելին:**

« կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

102. Ի՞նչ ժամկետով է տրվում Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի) և հողաշինարարի որակավորման վկայականը:

- **Անժամկետ:**

103. Ու՞մ կամ ո՞ր մարմնի կողմից է վավերացվում Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի) և հողաշինարարի որակավորման վկայականը:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի ստորագրությամբ և կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով:**

« կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

104. Որտե՞ղ և ո՞ր մարմինն է հրապարակում Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայական ստացած ֆիզիկական անձանց տվյալները:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն հրապարակում է իր պաշտոնական կայք-էջում:**

« կառավարության 29.09.2011թ. թիվ1441 որոշում

105. Ի՞նչ է անշարժ գույքի չափագրումը (հաշվառումը):

- **Անշարժ գույքի չափագրումը (հաշվառումը)՝ անշարժ գույքի՝ հողամասերի և դրանց վրա ամրակայված շենքերի, շինությունների առկայության, նպատակային նշանակության, սեփականության, օգտագործման ձևերի, դրա որակի ու քանակի, տեսքերի ու տեսակների վերաբերյալ հավաք տվյալների ստանալն է:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

106. Ո՞ր անշարժ գույքերն են ենթակա չափագրման (հաշվառման):

- **Չափագրման (հաշվառման) ենթակա են հողամասերը և դրանց վրա ամրակայված շինությունները:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

107. Ի՞նչ նպատակով է իրականացվում հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների չափագրումը (հաշվառումը):

- **Հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների չափագրումն (հաշվառումն) իրականացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և կադաստրային գնահատման նպատակով:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

108. Ի՞նչ է հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների քանակական հաշվառումը:

- **Անշարժ գույքի առկա վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրումն է՝ արտահայտված գծային չափերով (երկարություն, լայնություն, բարձրություն), մակերեսներով և ծավալներով:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

109. Ինչպե՞ս է իրականացվում հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների որակական հաշվառումը:

- **Հողամասի նպատակային և գործառնական նշանակության (հողատեսքերի), շինությունների նպատակային, գործառնական նշանակության, կառուցման տարեթվի, արտաքին հարդարման, ավարտվածության աստիճանի, շինանյութի տեսակի (պատերի, միջհարկային ծածկի, տանիքի) և այլ բնույթի որակական տվյալների հավաքագրման միջոցով:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

110. Ու՞մ կողմից է իրականացվում անշարժ գույքի չափագրումը:

- **Համապատասխան որակավորման վկայական ունեցող անձանց կողմից:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

111. Ինչպե՞ս են չափագրվում և գծագրվում հողամասերը:

- **Հողամասերը չափագրվում և գծագրվում են իրենց սահմանային չափերով, նշելով և համարակալելով բոլոր շրջադարձային (բեկման) կետերը, կոորդինատները, հողամասի տվյալ հատվածների երկարությունները, սահմանակից սեփականատերերի անունները, ազգանունները, անվանումները՝ եթե հայտնի են վերջիններիս տվյալները:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

112. Ինչպե՞ս են չափագրվում և գծագրվում հողամասերի վրա ամրակայված շինությունները:

- **Արտաքին չափերով չափագրվում և ըստ հողամասում գտնվելու տեղադրության գծագրվում են բոլոր շինությունները (բնակելի տները, հասարակական, արտադրական նշանակության շինությունները, բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերը, պարիսպները և այլ անշարժ գույքերը):**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

113. Ինչպե՞ս են չափագրվում պարիսպները:

- **Չափագրվում է պարիսպների երկարությունը, լայնությունը և բարձրությունը:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

114. Ինչպե՞ս են չափագրվում շինությունների ծավալում գտնվող տարածքները:

- **Չափագրվում է յուրաքանչյուր տարածքի երկարությունը, լայնությունը, ներքին բարձրությունը, ինչպես նաև կրող պատերի և միջնապատերի հաստությունները:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

115. Ի՞նչ բարձրության վրա են կատարվում ներքին չափագրումները:

- **Շինությունների հատակից 1.20 – 1.30 մետր բարձրության վրա:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

116. Ո՞ր չափերով է չափագրվում բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանները:

- **Բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանները չափագրվում են միայն ներքին չափերով:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 283-Ն հրաման, հավելված 1:

117. Ի՞նչ է գծագրվում հողամասի հատակագծի հիմնական հատվածում:

- **Հատակագծի հիմնական հատվածում գծագրվում է հողամասի հատակագիծը և նրանում առկա շինությունները:**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2

118. Հողամասի հատակագծում ինչպե՞ս են չափագրվում և գծագրվում այն շինությունները, որոնց մի մասը գտնվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված հողամասից դուրս:

- **Չափագրվում և հողամասի հատակագծում արտացոլվում են միայն հատկացված հողամասում գտնվող շինությունների մասերը:**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2

119. Հողամասի հատակագծում ինչպե՞ս են պատկերվում շինությունների և հողամասի հատման գծերը:

- **Շինությունների և հողամասի հատման գծերը հատակագծում պատկերվում են կետագծերով:**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2

120. Ինչպե՞ս են համարակալվում հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերը:

- **Հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերը համարակալվում են հողամասի ներքևի ձախ անկյունից սկսած՝ ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ:**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

121. Ի՞նչ մասշտաբով է գծագրվում հողամասի հատակագիծը՝ կախված տրամադրվող հողամասի չափից:

- **1:200**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

122. Կախված տրամադրվող հողամասի չափից, ի՞նչ մասշտաբով է գծագրվում հողամասի հատակագիծը:

- **1:500**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

123. Կախված տրամադրվող հողամասի չափից, ի՞նչ մասշտաբով է գծագրվում հողամասի հատակագիծը:

- **1:1000**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

124. Կախված տրամադրվող հողամասի չափից, ի՞նչ մասշտաբով է գծագրվում հողամասի հատակագիծը:

- **1:2000**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

125. Կախված տրամադրվող հողամասի չափից, ի՞նչ մասշտաբով է գծագրվում հողամասի հատակագիծը:

- **1:5000**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

126. Ի՞նչ ծածկագիր է նշվում հողամասի հատակագծում:

- **Հողամասի կադաստրային ծածկագիրը, եթե այդպիսին կա կամ հրապարակային սակարկության պայմանական ծածկագիրը:**

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

127. Ի՞նչ իրավական ակտի համաձայն է հողամասի հատակագծում նշվում հողամասի նպատակային նշանակությունը:

- **Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

128. Ի՞նչ իրավական ակտի համաձայն է հողամասի հատակագծում նշվում հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը:

- **Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

129. Հողամասի հատակագծում ինչպե՞ս են ցույց տրվում հողամասի նկատմամբ սերվիտուտները:

- **Հողամասի հատակագծի վրա շտրիխվում է սերվիտուտի գոտին:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

130. Հողամասի հատակագծում ո՞ր գեոդեզիական կոորդինատային համակարգով են նշվում հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատները:

- **WGS-84**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

131. Շինությունների կոորդինատների բացակայության դեպքում, դրանք հողամասում ճիշտ տեղադրելու նպատակով, ի՞նչ հեռավորություններ են չափագրվում և նշվում հողամասի հատակագծում:

- **Չափագրվում և հողամասի հատակագծում նշվում են շինությունների և հողամասի մոտակա սահմանի, ինչպես նաև շինությունների միմյանց միջև եղած հեռավորությունները:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 2:

132. Ինչպիսի՞ նշագրում է կատարվում հատակագծում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինությունների հատակագիծ կազմելու դեպքում:

- **Հատակագծի վերևի աջ անկյունում կատարվում է նշագրում՝ «Հաստատում եմ», որը ստորագրվում է հատակագիծը հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից, նշվում է վերջինիս ազգանունը, անունը, պաշտոնը և կնքվում է:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 4:

133. Ինչպե՞ս են գծագրվում շինությունների հատակագծերը:

- **Հատակագծում գծագրվում են բոլոր շինությունների հատակագծերն ըստ հարկերի՝ ներքին չափերով:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 4:

134. Ի՞նչ հերթականությամբ են գծագրվում շինությունների հատակագծերը:

- **Հատակագծի վերևի մասում գծվում է նկուղային հարկի հատակագիծը, այնուհետև հերթականությամբ դեպի ներքև գծվում են մնացած հարկերը:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 4:

135. Ի՞նչ մասշտաբով է գծագրվում շինությունների հատակագիծը:

- **1:100**

136. Ի՞նչ մասշտաբով է գծագրվում մեծ մակերես ունեցող շենքերի, շինությունների հատակագծերը:

- **1:200 կամ 1:500**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 4:

137. Հատակագծի վրա ինչպե՞ս են համարակալվում հարկի ներքին տարածքները:

- **Հարկի ներքին տարածքները հատակագծի վրա համարակալվում են մուտքի դռնից սկսած՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ, յուրաքանչյուր տարածքի կենտրոնում գիծ է գծվում և համարիչում գրվում է հերթական համարը, իսկ հայտարարում՝ տվյալ տարածքի մակերեսը:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 4:

138. Ինչպե՞ս են ցույց տրվում հատակագծում ինքնակամ կառուցված շինությունները:

- **Ինքնակամ կառուցված շինությունները հատակագծում նշագծվում (շտրիխապատվում) են կարմիր գույնով:**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրաման, հավելված 4:

139. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս որպես ի՞նչ է հանդես գալիս:

- **Որպես կառուցապատող:**

140. Ինչպե՞ս կարող է օգտագործել քաղաքաշինական գործունեության օբյեկտի սեփականատերն իրեն պատկանող օբյեկտը:

- **Կարող է օգտագործել միայն ըստ նպատակային նշանակության:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

141. Ո՞վ է ապահովում քաղաքաշինական օբյեկտի շահագործման որակական վիճակը նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

- **Սեփականատերը:**

142. Ի՞նչ իրավունք ունեն կառուցապատողները:

- **Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան ընտրել քաղաքաշինական գործունեության օբյեկտները, որոշել ներդրումների չափերը, պայմանագրային հիմունքներով ներգրավել օբյեկտի քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներին և շինարարություն իրականացնողներին.**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

143. Ի՞նչ պարտավորություններ ունեն կառուցապատողները:

- **Կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

144. Ի՞նչ պարտավորություններ ունեն կառուցապատողները:

- **Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք, այդ թվում՝ ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմաններ ստանալ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններից.**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

145. Ի՞նչ պարտավորություններ ունեն կառուցապատողները:

- **Ապահովել իրենց քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

146. Կարո՞ղ են արդյոք քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք կատարել կամ ներգրավվել իրենց մշակած նախագծերի փորձաքննությանը.

- **Չեն կարող:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

147. Ի՞նչ պարտավորություններ ունեն կառուցապատողները:

- **Կառուցապատումն ավարտել տվյալ քաղաքաշինական գործունեության համար շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերով հաշվարկված ու շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում և ապահովել ավարտված շինարարական օբյեկտի շահագործման փաստագրումը:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

148. Ինչպիսի՞ պարտավորություններ ունեն քաղաքաշինական փաստաթղթեր մշակողները:

- **Օրենքով նախատեսված դեպքերում ունենալ համապատասխան գործունեության իրավունքի լիցենզիա, կատարել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման առաջադրանքների և քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

149. Ո՞վ է ապահովում պետական քաղաքականության իրականացումը քաղաքաշինության բնագավառում:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությունը :**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

150. Ո՞վ է սահմանում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգերը:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությունը :**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

151. Ո՞վ է հաստատում քաղաքաշինական և տարածքային զարգացման հանրապետական և մարզային պետական ծրագրերը:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությունը :**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

152. Ի՞նչ է սահմանում տարածքների գոտիավորումը:

- **Սահմանում է համայնքի կամ դրա առանձին հատվածների տարածքների, հողամասերի և այլ անշարժ գույքի օգտագործման պարտադիր պահանջները, դրանց իրավական ռեժիմին, նպատակային ու գործառական նշանակությանը, թույլատրված օգտագործումներին համապատասխան:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

153. Ո՞ր անշարժ գույքի օբյեկտների վրա է տարածվում գոտիավորմամբ սահմանված պահանջները:

- **Տարածվում են անշարժ գույքի բոլոր օբյեկտների վրա և պահպանում են իրենց ուժը սեփականատերերի կամ օգտագործողների փոփոխման դեպքում:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

154. Ո՞ր նորմերի հիման վրա է իրականացվում պետական և համայնքային սեփականության հողամասերի օտարումը և օգտագործման տրամադրումը, հասարակության կամ պետական կարիքների համար գույքի օտարումը:

- **Գոտիավորմամբ սահմանված նորմերի հիման վրա՝ հողամասերի նպատակային ու գործառական նշանակությանը, դրանց օգտագործման իրավական ռեժիմին և թույլատրված օգտագործումներին (կառուցապատումներին) համապատասխան:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

155. Ո՞ր նորմերի հիման վրա է իրականացվում հողամասերի կառուցապատումը, ճարտարապետահատակագծային առաջադրանքում, շինարարության և քանդման թույլտվություններում քաղաքաշինական սահմանափակումների ու սերվիտուտների և այլ պարտադիր պահանջների սահմանումը:

- **Գոտիավորմամբ սահմանված նորմերի հիման վրա՝ հողամասերի նպատակային ու գործառական նշանակությանը, դրանց օգտագործման իրավական ռեժիմին և թույլատրված օգտագործումներին (կառուցապատումներին) համապատասխան:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

156. Ի՞նչ փաստաթղթերով է կանոնակարգվում համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը:

- **Համայնքի գլխավոր հատակագծով և քաղաքաշինական գոտիավորման նախագծով:**

157. Ի՞նչ բնույթի փաստաթուղթ է համայնքի գլխավոր հատակագիծը:

- **Համայնքի տարածական զարգացման հիմնադրույթներն ամրագրող ռազմավարական բնույթի փաստաթուղթ է, որը հիմնական (բազային) գոտիավորմամբ սահմանում է համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը, դրանց օգտագործման ռեժիմներն ու պարտադիր պահանջները:**

158. Հայաստանի Հանրապետության ո՞ր համայնքների համար է մշակվում պարզեցված գլխավոր հատակագիծ:

- **Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների:**

159. Ի՞նչ իրավունք է ստանում համայնքի ավագանին, գլխավոր հատակագծի նախագծային փաստաթղթերը հաստատելուց հետո:

- **Իրավունք է ստանում փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով սահմանված ծավալով ու փուլերով:**

160. Ի՞նչ ծրագրերի համապատասխան են համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում:

- **Համայնքի ավագանու հաստատած ամենամյա և քառամյա ծրագրերին համապատասխան:**

161. Ե՞րբ է հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված:

- **Հողամասի սեփականատիրոջ դիմումի համաձայն համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասը և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացրած որոշումն ուժի մեջ մտնելու պահից:**

162. Ինչպիսի՞ գրանցման են ենթակա հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները:

- **Պարտադիր ենթակա են պետական գրանցման:**

163. Հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխությունների մասին համայնքի ղեկավարը ի՞նչ ժամկետում է տեղեկացնում անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմնին:

- **10-օրյա:**

164. Ինչպիսի՞ փաստաթուղթ է համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը:

- **Համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է:**

165. Ինչի՞ համար է հիմք հանդիսանում համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը:

- **Հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար:**

166. Գյուղական համայնքներում և մինչև տասնհինգ հազար բնակչություն ունեցող քաղաքային համայնքներում ո՞ր տարածքների համար է մշակվում գոտիավորման նախագիծը:

- **Մշակվում է բնակավայրի, ինչպես նաև բնակավայրից դուրս գտնվող կառուցապատված կամ կառուցապատման ենթակա բոլոր տարածքների համար՝ գլխավոր հատակագծի կազմում:**

167. Տասնհինգ հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքային համայնքներում (բացառությամբ Երևան քաղաքի) ո՞ր տարածքների համար է մշակվում գոտիավորման նախագիծը:

- **Մշակվում է գլխավոր հատակագծով առաջնահերթ կառուցապատման համար առանձնացված տարածքների, ինչպես նաև գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքով նախատեսված և տվյալ համայնքի առանձնահատկություններից բխող՝ կարևոր քաղաքաշինական հանգույցներ ներառող տարածքների համար:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

168. Քանի՞ խմբի են բաժանվում քաղաքաշինական փաստաթղթերը:

- **Երկու:**

169. Նշվածներից ու՞մ համար են մշակվում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը:

- **Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների, դրանց խմբերի կամ առանձին հատվածների համար:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

170. Նշվածներից որո՞նք են համարվում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր:

- **Կառուցապատման նախագծերը, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով գործառական տարածքների հատակագծման և բարեկարգման նախագծերը:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

171. Նշվածներից որո՞նք են համարվում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր:

- **Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման նախագծերը, ինչպես նաև ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների և դրանց մասերի նախագծերը:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

172. Ի՞նչ է տրվում կառուցապատողին ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար:

- **Ճարտարապետահատակագծային առաջադրանք:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

173. Ո՞վ է սահմանում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգերը:

- **Հայաստանի Հանրապետության կառավարությունը:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

174. Ինչպիսի՞ պահանջներ են նշվում ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

- **Նշվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված և օբյեկտի նախագծմանն առնչվող քաղաքաշինական, պատմության և մշակույթի հուշարձանների ու շրջակա միջավայրի պահպանության, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, քաղաքացիական պաշտպանության, հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջները:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

175. Ո՞վ է տալիս արտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում:

- **Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք

176. Ի՞նչ է շինարարության թույլտվությունը:

- **Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:**

177. Ո՞վ է տալիս համայնքում:
• **Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**

178. Ո՞ր :
• **Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:**
<<Քաղաքաշինության մասին>> << օրենք

179. Ի՞նչ է քանդման թույլտվությունը:
• **Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ իրավունքը՝ իրականացնել շենքերի և շինությունների քանդումը:**
<<Քաղաքաշինության մասին>> << օրենք

180. Ո՞վ է տալիս :
• **Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**
<<Քաղաքաշինության մասին>> << օրենք

181. Ե՞րբ է սահմանված կարգով տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, հանդիսանում նաև քանդման թույլտվություն:
• **Երբ նոր կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց նույն վայրում գտնվող շենքի կամ շինության քանդման:**
<<Քաղաքաշինության մասին>> << օրենք

182. Ո՞վ է փաստագրում վարտված շինարարության շահագործման ընդունումը:
• **Համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**
<<Քաղաքաշինության մասին>> << օրենք

183. Ո՞րն է հանդիսանում էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտի:
• **Քաղաքացիների և շահագործող անձնակազմի անվտանգությունն ու գույքի պաշտպանությունն ապահովող տարածքը:**

<< կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 1:

184. Ո՞ր մարմինն է << օրենսդրությամբ սահմանված կարգով, իրենց իրավասության սահմաններում, իրականացնում վերահսկողություն էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների պահպանման նկատմամբ:
• **<< էներգետիկայի նախարարությունը:**

<< կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 3:

185. Ո՞ր մարմիններն են << օրենսդրությամբ սահմանված կարգով, իրենց իրավասության սահմաններում, իրականացնում վերահսկողություն էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների պահպանման նկատմամբ:
• **Պետական կառավարման տարածքային մարմինները:**

<< կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 3:

186. Ո՞ր մարմիններն են << օրենսդրությամբ սահմանված կարգով, իրենց իրավասության սահմաններում, իրականացնում վերահսկողություն էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների պահպանման նկատմամբ:
• **Տեղական ինքնակառավարման մարմինները:**

<< կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 3:

187. Ի՞նչ կարգով են փոխհատուցվում անվտանգության գոտիները, ինչպես նաև հողի նկատմամբ օգտակալություն /սերվիտուտ/ սահմանելու հետևանքով հողի սեփականատիրոջը կամ վարձակալին հասցված վնասները:

- **ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 5:

188. Ինչպե՞ս են սահմանվում մայրուղային խողովակաշարերի անվտանգության գոտիները:

- **Սահմանազատվում է խողովակաշարի երկու կողմով առնցքից 50 մետր հեռավորությամբ անցնող պայմանական գծերով:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 11:

189. Ինչպե՞ս են սահմանվում մայրուղային խողովակաշարերի անվտանգության գոտիները գյուղատնտեսական հողատարածքներում:

- **Սահմանազատվում է խողովակաշարի երկու կողմով առնցքից 25 մետր հեռավորությամբ անցնող պայմանական գծերով:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 11:

190. Քանի՞ մետր է սահմանվում ջրամբարների և գլխամասային կառուցվածքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը մինչև 15 աստիճան է:

- **10 մետր:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 7:

191. Քանի՞ մետր է սահմանվում ջրամբարների և գլխամասային կառուցվածքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը 15-ից մինչև 30 աստիճան է:

- **10-ից 15 մետր:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 7:

192. Քանի՞ մետր է սահմանվում ջրամբարների և գլխամասային կառուցվածքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը 30-ից մինչև 45 աստիճան է:

- **15-ից 20 մետր:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 7:

193. Ինչպե՞ս է սահմանվում ջրամբարների և գլխամասային կառուցվածքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը 45 աստիճանից բարձր է:

- **Որոշվում է սահմանված կարգով հաստատված նախագծով:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 7:

194. Քանի՞ մետր է սահմանվում ջրանցքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը մինչև 15 աստիճան է:

- **6 մետր:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 8:

195. Քանի՞ մետր է սահմանվում ջրանցքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը 15-ից մինչև 30 աստիճան է:

- **6-ից 10 մետր:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 8:

196. Քանի՞ մետր է սահմանվում ջրանցքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը 30-ից մինչև 45 աստիճան է:

- **10-ից 20 մետր:**

ՀՀ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 8:

197. Ինչպե՞ս է սահմանվում ջրանցքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը 45 աստիճանից բարձր է:

- **Որոշվում է սահմանված կարգով հաստատված նախագծով:**

«Վ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 8:

198. Ու՞մ կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան մայրուղային խողովակաշարերի անվտանգության գոտիներում կարող է իրականացվել ցանկացած տնտեսական գործունեություն:

- **Միայն տնօրինող ձեռնարկությունների /կազմակերպությունների/ :**

«Վ կառավարության 26.05.1998թ. թիվ 313 որոշում. կետ 13:

199. Ու՞մ կողմից ստեղծված համապատասխան հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա է համայնքի ղեկավարը գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրում ավելի ցածրարժեք հողատեսքի:

- **«Վ մարզպետի:**

«Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 1:

200. Ո՞ր դեպքում կարող է գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրվել ավելի ցածրարժեք հողատեսքի:

- **Եթե գտնվում են մեծ թեքությունների վրա:**

«Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 3:

201. Ո՞ր դեպքում կարող է գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրվել ավելի ցածրարժեք հողատեսքի:

- **Եթե ընթանում են ճահճացման երևույթներ:**

«Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 3:

202. Ո՞ր դեպքում կարող է գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրվել ավելի ցածրարժեք հողատեսքի:

- **Եթե ընթանում են աղակալման երևույթներ:**

«Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 3:

203. Ու՞մ կողմից ստեղծված համապատասխան հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարը կարող է գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք ջրովի հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք անջրդի հողատեսքի:

- **«Վ մարզպետի:**

«Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 4:

204. Ո՞ր մարմնի կողմից տրված համապատասխան գրավոր տեղեկանքի առկայության դեպքում կարող է հանձնաժողովը դրական եզրակացություն տալ գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք ջրովի հողատեսքը ավելի ցածրարժեք անջրդի հողատեսքի փոխադրելու վերաբերյալ:

- **«Վ տարածքային կառավարման ջրային տնտեսության պետական կոմիտեի:**

205. «Վ տարածքային կառավարման ջրային տնտեսության պետական կոմիտեն քանի՞ օրվա ընթացքում պետք է ներկայացնի գրավոր տեղեկանք՝ ոռոգման ցանցի առկայության, դրա պիտանելիության և շահագործման մասին հանձնաժողովին գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք ջրովի հողատեսքը ավելի ցածրարժեք անջրդի հողատեսքի փոխադրելու վերաբերյալ:

- **10 օրվա ընթացքում:**

«Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 4:

206. Ու՞մ կողմից է սահմանվում ոռոգման ցանցի առկայության, դրա պիտանելիության և շահագործման մասին՝ հանձնաժողովին տրամադրվող տեղեկանքի ձևը:

- **«Վ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի:**

«Վ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 4:

207. Գյուղատնտեսական նշանակության բարձրաժճեք հողատեսքերն ավելի ցածրաժճեքի փոխադրվելու դեպքում հողակադաստրային գնահատման խմբերն ինչպիսի՞ փոփոխության են ենթարկվում:

- **Փոփոխության չեն ենթարկվում:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 6:

208. Համայնքի ղեկավարը գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման վերաբերյալ տեղեկանքը ո՞ր մարմնին է տրամադրում:

- **ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 9:

209. Համայնքի ղեկավարը գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման վերաբերյալ տեղեկանքը քանի՞ օրվա ընթացքում է տրամադրում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը:

- **5 օրվա:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 9:

210. Ովքե՞ր են հողային հարաբերությունների սուբյեկտներ:

- **Հայաստանի Հանրապետությունը, համայնքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձինք և քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, միջազգային կազմակերպությունները, հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձինք:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 4:

211. Ո՞ր մարմիններն են իրականացնում հողերի ընթացիկ հաշվառումը:

- **Տեղական ինքնակառավարման մարմինները:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 3:

212. Որը՞ չի հանդիսանում բնակավայրերի նպատակային նշանակության գործառնական նշանակության հող:

- **Այլ հողատեսք:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 10:

213. Որը՞ չի հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողատեսք:

- **Այլ հողեր:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 9:

214. Որը՞ չի հանդիսանում էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների գործառնական նշանակության հող:

- **Արդյունաբերության:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 14:

215. Ո՞ր օբյեկտի կողմից զբաղեցված հողամասը չի հանդիսանում էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հող:

- **Էներգետիկայի նախարարության շենք:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 15:

216. Ո՞ր հողամասերն են դասակարգվում բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարքում:

- **Անհատական բնակելի տների, բազմաբնակարան բնակելի շենքերի, այգեգործական տների և դրանց կից օժանդակ շինությունների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերն:**

«Կառավարության 17.09.2009թ. թիվ 1066 որոշում. կետ 10:

217. Ո՞ր հողամասերն են դասակարգվում հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարքում:

- **Բնակչության սոցիալական սպասարկման, վարչական ու հասարակական կազմակերպությունների և այլ հասարակական նշանակության շենքերի, շինությունների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերն:**

«« հողային օրենսգիրք, հոդված 10:

218. Ո՞ր հողամասերն են դասակարգվում խառը կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարքում:

- **Բնակելի, հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման հողերի այնպիսի համադրությամբ կազմավորված տարածքները, որտեղ դրանցից որևէ մեկը գերակշիռ նշանակություն չունի:**

«« հողային օրենսգիրք, հոդված 10:

219. Ո՞ր հողամասերն են դասակարգվում ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողերի շարքում:

- **Որոնք զբաղեցված են փողոցներով, հրապարակներով, զբոսայգիներով և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներով:**

«« հողային օրենսգիրք, հոդված 10:

220. Ո՞ր հողերն են դասակարգվում բնակավայրերի այլ հողերի գործառնական նշանակության շարքում:

- **Բնակելի, հասարակական, խառը կառուցապատման և ընդհանուր օգտագործման համար նախատեսված, սակայն դեռևս չկառուցապատված ազատ հողերը:**

«« հողային օրենսգիրք, հոդված 10:

221. Ի՞նչ փաստաթղթերի հիման վրա են որոշվում բնակավայրերի սահմանագծերը:

- **Հաստատված քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերի հիման վրա:**

«« հողային օրենսգիրք, հոդված 11:

222. Ի՞նչ փաստաթղթի հիման վրա են սահմանվում քաղաքամերձ գոտիների սահմանները և իրավական ռեժիմը:

- **Օրենքով:**

«« հողային օրենսգիրք, հոդված 12:

223. Ո՞ր գործառնական նշանակության հողամասերն են դասակարգվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի շարքում:

- **Արդյունաբերական օբյեկտների, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, պահեստարանների և ընդերքօգտագործման:**

«« հողային օրենսգիրք, հոդված 13:

224. Ի՞նչ կարգով են որոշվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի օգտագործման հատուկ պայմանները:

- **Օրենքով սահմանված կարգով:**

«« հողային օրենսգիրք, հոդված 13:

225. Նշված գործառնական նշանակության հողամասերից որը՞ չի հանդիսանում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հող:

- **Տրանսպորտի հող:**

«« հողային օրենսգիրք, հոդված 13:

226. Որո՞նք են համարվում էներգետիկայի օբյեկտների հողեր:

- **Ջերմային, ատոմային, հիդրոէլեկտրակայաններով, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերով, մայրուղային գազատարներով և էներգետիկ այլ նպատակներով օգտագործվող շենքերի, շինությունների կառուցման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:**

«« հողային օրենսգիրք, հոդված 15:

227. Որո՞նք են համարվում կապի օբյեկտների հողեր:

- **Կապի, ռադիոհաղորդումների, հեռուստատեսության օբյեկտների, ռադիոռելեային ու վերահեռարձակող կայանների և կապի նշանակության այլ օբյեկտների կառուցման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:**

«« հողային օրենսգիրք, հոդված 16:

228. Որո՞նք են համարվում տրանսպորտի օբյեկտների հողեր:

- **Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային տրանսպորտի օբյեկտների, երկաթուղային կայարանների, երկաթգծերի, երկաթուղային և ավտոճանապարհների, թունելների ու կամուրջների, ավտոկայանների, օդանավակայանների և այլ տրանսպորտային օբյեկտների կառուցման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:**

«« հողային օրենսգիրք, հոդված 17:

229. Որո՞նք են համարվում կոմունալ օբյեկտների հողեր:

- **Կոմունալ օբյեկտների, ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղագծերի, օրվա կարգավորիչ ջրամբարների, մաքրման կայանների, պոմպակայանների, աղբավայրերի և այլ օբյեկտների կառուցման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:**

«« հողային օրենսգիրք, հոդված 18:

230. Որո՞նք են համարվում հատուկ պահպանվող տարածքների հողեր:

- **Գեղագիտական, բնապահպանական, գիտական, պատմական և մշակութային, հանգստյան, առողջարարական և այլ արժեքավոր նշանակություն ունեցող հողամասերը, որոնց համար սահմանված է հատուկ իրավական ռեժիմ:**

«« հողային օրենսգիրք, հոդված 19:

231. Ո՞ր մարմնի կողմից է սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի առանձնացման, տրամադրման, օգտագործման և պահպանման կարգը:

- **«« կառավարության:**

«« հողային օրենսգիրք, հոդված 19:

232. Ինչպե՞ս է սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի սահմանման կարգն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները և իրավական ռեժիմը:

- **Օրենքով:**

«« հողային օրենսգիրք, հոդված 19:

233. Որո՞նք են համարվում բնապահպանական հողեր:

- **Բնական, գիտական, գեղագիտական և հանգստի նշանակություն ունեցող ու հատուկ պահպանության նպատակով նախատեսված բնության հուշարձանների, արգելանոցների, ազգային և ծառաբանական զբոսայգիների ու պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի հողերը:**

«« հողային օրենսգիրք, հոդված 20:

234. Ո՞ր դեպքում է արգելվում բնապահպանական հողերի օտարումը:

- **Դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող նպատակների համար գործունեության դեպքում:**

«« հողային օրենսգիրք, հոդված 20:

235. Որո՞նք են համարվում առողջարարական նպատակներով նախատեսված հողերը:

- **Բնական, բուժական պաշարներով, բարենպաստ կլիմայով և այլ բնական գործոններով ու պայմաններով օժտված բուժական-առողջարարական վայրերի և առողջարանների հողամասերը,**

որոնք օգտագործվում են, կամ կարող են օգտագործվել հիվանդությունների կանխարգելման և բուժման համար:

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 21:

236. Որո՞նք են համարվում հանգստի համար նախատեսված հողերը:

- **Բնակչության հանգստի կազմակերպման, զբոսաշրջության, ֆիզիկական դաստիարակության և սպորտային գործունեության կազմակերպման համար նախատեսված ու օգտագործվող հողամասերը:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 22:

237. Ինչպիսի՞ գործունեություն է արգելվում իրականացնել հանգստի համար նախատեսված հողերում:

- **Յուրաքանչյուր գործունեություն, որը հակասում է դրանց ըստ նպատակային նշանակային օգտագործելուն:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 22:

238. Ո՞ր օբյեկտներով զբաղեցված հողամասերը չեն մտնում հանգստի համար նախատեսված հողերի կազմի մեջ:

- **Այգեգործական տնակների:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 22:

239. Որո՞նք են համարվում պատմական և մշակութային հողեր:

- **Պատմական և մշակութային արժեքների ու պատմական միջավայրի պահպանության, հուշագրոսայգիների, հուշահամալիրների, հնագիտական ու ճարտարապետական հուշարձաններով և այլ արժեքներով զբաղեցված հողամասերը:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 23:

240. Ինչպե՞ս են սահմանվում պատմական և մշակութային նշանակության հողամասերի օգտագործման և պահպանության գոտիները:

- **Օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 23:

241. Ինչպիսի՞ գործունեությունն է արգելվում իրականացնել պատմական և մշակութային նշանակության հողամասերի վրա:

- **Դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 23:

242. Ո՞ր հողերն են համարվում հատուկ նշանակության հողեր:

- **Պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողերը և օրենքով պաշտպանվող շենքերի ու շինությունների օգտագործման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 24:

243. Ո՞ր մարմնի կողմից են սահմանվում հատուկ նշանակության հողերի օգտագործման և դրանց նկատմամբ սահմանափակումները, պաշտպանական գոտիները, հատուկ կարգավորման դրույթները և քաղաքաշինական գործունեություն ծավալելու կարգը:

- **ՀՀ կառավարության:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 24:

244. Ի՞նչ փաստաթղթերով է սահմանվում անտառային հողերի գործառնական նշանակությունը:

- **ՀՀ անտառային օրենսգրքով և անտառային հողերի օգտագործման սխեմաներով:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 25:

245. Որը՞ չի հանդիսանում անտառային հողերի գործառնական նշանակության հող:

- **Անօգտագործելի հող:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 25:

246. Կարող են արդյո՞ք անտառային հողերը տրամադրվել վարձակալությամբ:

• Այո:

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 25:

247. Ո՞ր դեպքերում կարող են անտառային հողերը տրամադրվել վարձակալությամբ՝ շենքեր և շինություններ կառուցելու նպատակով:

- **Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ բացառապես անտառային տնտեսության կարիքների համար:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 25:

248. Ի՞նչ կարգով են սահմանվում անտառային հողերի տրամադրումը, պայմաններն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները և հողօգտագործման հատուկ ռեժիմը:

- **Հողային օրենսգրքով, Անտառային օրենսգրքով և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 25:

249. Որո՞նք են համարվում ջրային հողեր:

- **Ջրային օբյեկտներով, գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիբրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 26:

250. Սահմանվո՞ւմ են արդյոք սանիտարական պահպանության գոտիներ հատուկ սանիտարական պաշտպանություն պահանջող ջրային հողերի համար:

• Այո:

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 26:

251. Ի՞նչ փաստաթղթերով են սահմանվում ջրային հողերի օգտագործման կարգը:

- **Հողային օրենսգրքով և Ջրային օրենսգրքով:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 26:

252. Ո՞ր հողերն են համարվում պահուստային հողեր:

- **Համայնքներին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության, օգտագործման իրավունքով չտրամադրված պետական հողերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով կոնսերվացիայի արդյունքում տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 27:

253. Ո՞ր հողերը կարող են ներառվել պահուստային հողերի կազմում:

- **Քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով առանձնացված չօգտագործվող հողերը, ինչպես նաև ավագուտները, ճահիճները և այլ անօգտագործելի հողերը:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 27:

254. Ի՞նչ կարգով կարող են պահուստային հողերը օտարվել և օգտագործման իրավունքով տրամադրվել:

- **Հողային օրենսգրքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով՝ դրանց նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 27:

255. Պահպանվո՞ւմ է արդյոք սերվիտուտը հողամասը մեկ անձից մյուսին անցնելիս:

- **Պահպանվում է:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 50:

256. Ենթակա՞ է արդյոք սերվիտուտը պետական գրանցման:

- **Ենթակա է:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 50:

257. Ըստ ժամկետների ինչպիսի՞ն կարող է լինել սերվիտուտը:

- **Ժամանակավոր կամ մշտական:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 50:

258. Ինչպե՞ս պետք է ծանրաբեռնված լինել հողամասը սերվիտուտով:

- **Հնարավորին չափ նվազ:**

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 50:

259. Ո՞ր դեպքում սեփականատերը կարող է դատական կարգով պահանջել դադարեցնել հողամասի սերվիտուտը, կամ փոփոխել նպատակային նշանակությունը:

- Եթե սերվիտուտով ծանրաբեռնվելու արդյունքում հողամասը չի կարող օգտագործվել իր նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան:

ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 50:

1. Ի՞նչ է հողաշինարարությունը.

- հողային հարաբերությունների կարգավորմանը, հողային պաշարների կառավարմանը, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարմանը, հողերի օգտագործման ու պահպանության կազմակերպմանը, հողերի մոնիթորինգին, հողաշինարարության տարածքային և ներտնտեսային ծրագրեր (փաստաթղթեր) կազմելուն ուղղված պետական միջոցառումների համալիր է

ՀՀ, հոդված 31, մաս 1

2. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման ոլորտում.

- ապահովում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման ծրագրավորումը և կազմակերպումը՝ անկախ սեփականության սուբյեկտներից և տնտեսվարման ձևերից

ՀՀ, հոդված 31, մաս 2, կետ 1

3. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը գյուղատնտեսական հողերի պահպանման ոլորտում.

- ապահովում է գյուղատնտեսական հողերի պահպանման համապետական ու տարածքային ծրագրերի մշակումը

ՀՀ, հոդված 31, մաս 2, կետ 2

4. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը հողամասի տրամադրման ոլորտում.

- ապահովում է հողամասերը տեղանքում ամրացնելը, հողամասերի հատակագծերի, հողամասի տրամադրման վերաբերյալ փաստաթղթերի նախապատրաստումը

ՀՀ, հոդված 31, մաս 2, կետ 3

5. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը վարչական սահմանների և հողամասերի սահմանների հետ կապված հարցերում.

- ապահովում է մարզերի, համայնքների վարչական սահմանների, սեփականատերերի և հողօգտագործողների հողամասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը

ՀՀ, հոդված 31, մաս 2, կետ 7

6. Ի՞նչ է ներառում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը.

- ա) հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի պետական հաշվառումը, քարտեզագրումը.

բ) հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի գնահատումը.

գ) հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների, դրանց սահմանափակումների, ներառյալ՝ սերվիտուտների, պետական գրանցումը.

դ) անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկատվական բանկի ստեղծումը և կառավարումը

7. Ի՞նչ է նպատակով է իրականացվում հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի պետական հաշվառումը.

- **հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի որակի և քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տվյալներ ստանալու նպատակով:**

ՀՕ, հոդված 34, մաս 1

8. Ովքե՞ր կամ ո՞ր մարմիններն են ապահովում ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի և մարզերի հողային պաշարների կառավարման սխեմաների իրականացման նկատմամբ հսկողությունը.

- **հողային ռեսուրսների կառավարման լիազոր մարմինները՝ իրենց իրավասությունների սահմաններում**

ՀՀ կառավարության 03.02.05թ N125-Ն որոշում

9. Ովքե՞ր կամ ո՞ր մարմիններն են իրականացնում համայնքների հողերի օգտագործման սխեմաների իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

- **համապատասխան մարզպետները**

ՀՕ, հոդված 42, մաս 1, կետ 2

10. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է ապահովում առանձին տարածքի կամ հողամասի հողաշինարարական նախագծի իրականացման նկատմամբ հսկողություն.

- **համապատասխան համայնքի ղեկավարը**

03.02.05թ N 125-Ն որոշում

11. Որտե՞ղ են նշվում հողամասերի նպատակային նշանակության փոփոխման և հեռանկարային օգտագործման, դրանց միավորման ու բաժանման վերաբերյալ առաջարկությունները.

- **սխեմայի մշակման առաջադրանքում**

02.05.03թ N625 –Ն որոշում

12. Որտե՞ղ է արտահայտվում հողամասերի փաստացի և հեռանկարային բաշխումն ըստ նպատակային նշանակության և հողատեսքերի.

- **հողերի օգտագործման սխեմաների գրաֆիկական մասում**

02.05.03թ N625 –Ն որոշում

13. Ի՞նչն է հիմք հանդիսանում հողաշինարարական փաստաթղթերի մշակման համար.

- **հողաշինարարության իրականացման մասին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, հողաշինարարություն իրականացնելու վերաբերյալ պայմանագրերը, ինչպես նաև դատարանի վճիռները**

03.02.05թ N125 –Ն որոշում

14. Ի՞նչ փաստաթղթերի հիման վրա է իրականացվում հողաշինարարությունը.

- **գիտականորեն հիմնավորված, քննարկված և հաստատված հողաշինարարական փաստաթղթերի հիման վրա**

ՀՕ, հոդված 31, մաս 4

15. Որո՞նք են հողաշինարարության օբյեկտները.

- **Հայաստանի Հանրապետության, ՀՀ մարզերի, ՀՀ համայնքների տարածքները, դրանց առանձին մասերը (հողատարածքները) և հողամասերը**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 3

16. Ինչի՞ց է բխում ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի կազմման, նախագծման առաջադրանքը.

- **ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծից**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 5

17. Ու՞մ կողմից են հաստատվում հողաշինարարական փաստաթղթերը.

- **պատվիրատուի կողմից**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 9

18. Ի՞նչ մասշտաբի տեղագրական քարտեզի վրա են ներկայացվում ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի գրաֆիկական մասերը.

- **1:200 000 մասշտաբի տեղագրական քարտեզի վրա**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 5

19. Ո՞ր հողերը չեն մտնում ՀՀ հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության դասակարգման մեջ.

- **լեռնային հողերը**

ՀՕ, հողված 6, մաս 1

20. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **գյուղատնտեսական հողերի պահպանման համապետական ու տարածքային ծրագրերի մշակումը**

03.02.05թ N 125-Ն

21. Ո՞ր հողերը չեն մտնում ՀՀ հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության դասակարգման մեջ.

- **առևտրի, սպասարկման ոլորտի հողերը**

ՀՕ հողված 6, մաս 1

22. Ո՞ր հողերը չեն մտնում ՀՀ հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության դասակարգման մեջ.

- **խոպան հողերը**

6, 1

23. Ո՞ր հողերը չեն մտնում ՀՀ հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության դասակարգման մեջ.

- **օգտագործելի հողերը**

6, 1

24. Ո՞վ է սահմանում հողամասերի հատակագծերի ձևերը.

- **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն**

ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշում

25. Ի՞նչ է հողատեսքը.

- **գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերի այն հատկանիշների համալիրն է, որը բնութագրում է դրանց գործառնական օգտագործումը**

ՀՕ հողված7, մաս 3

26. Որո՞նք են հողային հարաբերությունների օբյեկտները.

- **հողամասերը և դրանց նկատմամբ իրավունքները**

ՀՕ հողված 4, մաս 4

27. Որո՞նք են պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողերը.

- **քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերն են**

ՀՕ հողված 55

28. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն տարածքային կառավարման մարմինների հողային հարաբերությունների բնագավառում իրականացվող գործունեության նկատմամբ.

- **պետական լիազորված մարմինը** <Օ հոդված 41, մաս 1

29. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն հողային ֆոնդի նպատակային օգտագործման նկատմամբ.

- **պետական լիազորված մարմինը** <Օ հոդված 41, մաս 1

30. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ.

- **մարզպետը** <Օ հոդված 42, մաս 1

31. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման նկատմամբ.

- **համայնքի ղեկավարը** 43, 1

32.

-

29, 1

33. Ո՞վ կամ ո՞ր մարմինը և ի՞նչ ժակետներում է հաստատում համայնքի հողերի օգտագործման սխեման.

- **համայնքի ավագանին՝ եռօրյա ժամկետում** 02.05.03թ N625 –Ն որոշում հավելված, կետ 31

34. Ո՞րը չի համարվում հողաշինարարության կազմակերպման և իրականացման հիմնական փուլերից.

- **հողի շուկայական գնահատումը**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 11

35. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է կազմում հողաշինարարական փաստաթղթերի մշակման տեխնիկական առաջադրանքը.

- **պատվիրատուն**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 12

36. Ո՞ր մարմնի հետ են համաձայնեցվում ՀՀ տարածքի, ՀՀ մարզերի տարածքների և դրանց առանձին հատվածների համար մշակվող հողաշինարարական փաստաթղթերի մշակման տեխնիկական առաջադրանքները.

- **ՀՀ գյուղատնտեսության, բնապահպանության և քաղաքաշինության նախարարությունների և մարզպետների հետ**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 13

37. Ու՞մ կամ ո՞ր մարմնի հետ են համաձայնեցվում համայնքների համար մշակվող հողաշինարարական փաստաթղթերի տեխնիկական առաջադրանքները.

- **ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության, քաղաքաշինության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և համապատասխան մարզպետի հետ**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 14

38. Ու՞մ կամ ո՞ր մարմնի հետ են համաձայնեցվում առանձին տարածքների և հողամասերի հողաշինարարական նախագծերի առաջադրանքները.

- **համայնքների ղեկավարների հետ**

03.02.05 N 125-

14

39.

-

03.02.05 N 125-

14

40. 39.

-

03.02.05թ N 125-Ն որոշման հավելված կետ20

41. Ի՞նչ մասերից է բաղկացած հողերի օգտագործման սխեման.

- **գրաֆիկական և տեքստային մասերից**

02.05.03թ N625 –Ն որոշում

42. Ե՞րբ է համայնքի համար մշակվող հողաշինարարական փաստաթղթի առաջադրանքը ներկայացվում է շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համաձայնեցմանը.

- **միայն համայնքի ավագանու հավանությանն արժանանալուց հետո**

03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 17

43. Ի՞նչ իրավունքով են տրամադրվում պետության և համայնքների սեփականության հողամասերը.

- **տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով**
ՀՕ հոդված 57, մաս 1

44. Հողաշինարարական փաստաթղթերի կազմումը և հաստատումը հողաշինարարության կազմակերպման և իրականացման ո՞ր փուլերից է.

- **հողաշինարարության կազմակերպման և իրականացման հիմնական փուլերից է**
03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 11

45. Նախագծի իրականացումը, հողամասերի սահմանների ամրացումը, նախագծով սահմանված միջոցառումների իրականացումը հողաշինարարության կազմակերպման և իրականացման ո՞ր փուլերից է.

- **հողաշինարարության կազմակերպման և իրականացման հիմնական փուլերից է**
03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 11

46. Որո՞նք են համարվում գյուղատնտեսական նշանակության հողեր.

- **գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը**
ՀՕ հոդված 9, մաս 1

47. Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացումը հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է.

- **հողաշինարարական փաստաթղթերի կազմման հիմնական փուլերից է**
03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 20

48. Հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետազոտումները ու հետախուզումները հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է.

- **հողաշինարարական փաստաթղթերի կազմման հիմնական փուլերից է**
03.02.05թ N 125-Ն որոշում հավելված կետ 20

49. Հողերի որակական գնահատումը /բոնիտում/ հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է.

- **հողաշինարարական փաստաթղթերի կազմման հիմնական փուլերից է**
03.02.05 N 125- 20

50. Հողերի հաշվառումը՝ ըստ նպատակային նշանակության, սեփականության ձևերի հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է.

- **հողաշինարարական փաստաթղթերի կազմման հիմնական փուլերից է**
03.02.05 N 125- 20

51. Հողաշինարարական նախագծի կազմումը և հաստատումը հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է.

- **հողաշինարարական փաստաթղթերի կազմման հիմնական փուլերից է**
03.02.05 N 125- 20

52. Ի՞նչ է հողերի օգտագործման սխեման.

սխեման քաղաքային կամ գյուղական համայնքի վարչական սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների հողօգտագործումը կանոնակարգող, պետական ու համայնքի հողերի տարածքային զարգացման և արդյունավետ օգտագործման հիմնական ուղղություններն ամրագրող հողաշինարարական փաստաթուղթ է, որը ներառում է հողերի բաշխումն ըստ

նպատակային նշանակության՝ հիմնական (բազային) տեսակների սահմանմամբ և բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ջրային, ինժեներաերկրաբանական, սեյսմիկ անվտանգության առնչվող և այլ բնույթի սահմանափակումների ամրագրմամբ 02.05.03թ N625 –Ն որոշում հավելված, կետ 2

53. Համայնքի ղեկավարի կողմից մշակված հողերի օգտագործման սխեմայի կազմման առաջադրանքի նախագիծը համայնքի ավագանու հավանությանն արժանանալուց հետո ի՞նչ ժամկետում է ներկայացվում համապատասխան մարզպետին՝ համաձայնեցման.

- **5-օրյա ժամկետում** 02.05.03թ N625 –Ն որոշում հավելված, կետ 12

54. Ի՞նչ հողատեսքերի են բաժանվում գյուղատնտեսական նշանակության հողերը.

- **1. վարելահողերի, 2. բազմամյա տնկարկների, 3. խոտհարքների, 4. արոտավայրերի, 5. այլ հողատեսքերի** <O հողված 9, մաս 2

55. Ինչպե՞ս են դասակարգվում բնակավայրերի հողերն, ըստ գործառնական նշանակության.

- **1. բնակելի կառուցապատման, 2. հասարակական կառուցապատման, 3. խառը կառուցապատման, 4. ընդհանուր օգտագործման հողեր, 5. այլ հողեր** <O հողված 10, մաս 2

56. Ինչպե՞ս են դասակարգվում էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերն՝ ըստ գործառնական նշանակության.

- **1. էներգետիկայի, 2. կապի, 3. տրանսպորտի, 4. կոմունալ ենթակառուցվածքների** <O հողված 14, մաս 1

57. Ինչպե՞ս են են դասակարգվում հատուկ պահպանվող տարածքների հողերն՝ ըստ գործառնական նշանակության.

- **1. բնապահպանական, 2. առողջարարական նպատակներով նախատեսված, 3. հանգստի համար նախատեսված, 4. պատմական և մշակութային** <O հողված 19, մաս 2

58. Որո՞նք հատուկ նշանակության հողեր չեն.

- **պատմական և մշակութային հողերը** <O հողված 24

59. Ո՞ր հողատեսքերը կարող են ներառվել անտառային հողերի կազմում.

- **գյուղատնտեսական հողատեսքերը, թփուտները, հողերի պահպանության նպատակով հիմնված անտառաշերտերը և այլ հողեր** <O հողված 25, մաս 1

60. Որո՞նք ջրային հողեր չեն.

- **հիդրոէլեկտրոկայաններով զբաղեցված հողերը** <O հողված 26, մաս 1

61. Որո՞նք չեն ներառվում պահուստային հողերի կազմում

- **արոտավայրերը** <O հողված 27, մաս 2

62. Սեփականատերերը և օգտագործողները ի՞նչ միջոցների հաշվին են իրականացնում հողերի պահպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները.

- **իրենց միջոցների հաշվին** <O հողված 36, մաս 8

63. Ինչո՞վ է սահմանվում հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և դրա մերժման կարգը.

- **<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով** <Օ հոդված 53, մաս 3

64. Ի՞նչ կարգով է կատարվում տարբեր համայնքների միջև համայնքային հողերի միավորումը, փոխանակությունը և վերաբաշխումը.

- **օրենքով սահմանված կարգով** <Օ հոդված 56, մաս 6

65. Համայնքներին սեփականության իրավունքով պատկանող և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերով, շինություններով զբաղեցված հողամասերը կարո՞ղ են հանձնվել վարձակալության.

- **չեն կարող հանձնվել վարձակալության** <Օ հոդված 81, մաս 2

66. Որքա՞ն է սահմանվում համայնքների սեփականության հողամասերի տարեկան վարձավճարի չափը.

- **այն չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից** <Օ հոդված 81, մաս 3

67. Ո՞րը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերը նախապատրաստելու միջոցառումներից չէ.

- **հողամասերի սահմանների ձևափոխում բնության մեջ և դրանց ամրացում** 03.02.05թ N 125-Ն որոշում

68. Ո՞ր ծրագրերին համապատասխան է իրականացվում հողերի մոնիթորինգը.

- **համապետական և տարածքային ծրագրերին համապատասխան** 03.02.05թ N 125-Ն որոշում

69. Ինչո՞վ է սահմանվում հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության կարգը.

- **օրենքով** <Օ հոդված 40

70. Ի՞նչ կարգով է իրականացվում ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասի տնօրինումը, տիրապետումը և օգտագործումը.

- **ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով** <Օ հոդված 45, մաս 4

71. Ի՞նչ է քաղաքացիական օրենսգրքով և հողային օրենսգրքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան պայմանագրեր և այլ գործարքներ կնքելու միջոցով հողամասի և դրա նկատմամբ իրավունքների անցումը մեկ անձից մեկ այլ անձի.

- **հողամասի շրջանառություն է** 84, 1

72. Ո՞ր հողերը կարող են լինել բնակավայրերի սահմաններում.

- **հողային ֆոնդի կազմում առկա բոլոր հողերը.** 11, 2

73. Գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերի փողադրումն ավելի ցածրարժեք հողատեսքերի՝ կառավարության սահմանված կարգով, ու՞մ թույլտվության հիման վրա է իրականացվում.

- **համայնքի ղեկավարի թույլտվության հիման վրա.** <Օ հոդված 9, մաս 4

74. Հողամասերի ներառումը բնակավայրերի սահմանների մեջ Ի՞նչ ազդեցություն է ունենում դրանց սեփականատերերի իրավունքների վրա.

- **չի հանգեցնում դրանց սեփականատերերի իրավունքների փոփոխման կամ դադարման.**

ՀՕ հոդված 11, մաս 4

75. Ինչո՞վ են սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի սահմանման կարգն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները, իրավական ռեժիմը.

- **Օրենքով.**

19, 4

76. Ո՞վ է ապահովում առանձին տարածքի կամ հողամասի հողաշինարարական նախագծի իրականացման նկատմամբ հսկողությունը.

- **համապատասխան համայնքի ղեկավարը.**

03.02.05թ N 125-Ն որոշում

77. Հայաստանի Հանրապետությունում ո՞ր հողերն են մոնիթորինգի օբյեկտ.

- **բոլոր հողերը.**

32, 2

78. Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում համայնքների հողերի օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

- **մարզպետը.**

42, 1

79. Ի՞նչ է բնութագրում հողատեսքը.

- **գործառնական օգտագործումը.**

ՀՕ հոդված 7

80. Ո՞ր հողերի դասին են դասակարգվում հասարակական կառուցապատման հողերն ըստ գործառնական նշանակության.

- **բնակավայրերի հողերի դասում.**

ՀՕ հոդված 10

81. Ինչպիսի՞ հողեր են համարվում բնակելի, հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման հողերի այնպիսի համադրությամբ կազմավորված տարածքները, որտեղ դրանցից որևէ մեկը գերակշիռ նշանակություն չունի.

- **խառը կառուցապատման հողեր.**

ՀՕ հոդված 10

82. Ինչպիսի՞ հողեր են համարվում բնակավայրերի այն հողատարածքները, որոնք զբաղեցված են փողոցներով, հրապարաներով, զբոսայգիներով և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներով.

- **ընդհանուր օգտագործման հողեր.**

ՀՕ հոդված 10

83. Հատուկ պահպանվող տարածքների հողերի վրա դրանց գործառնական նշանակությանը և սահմանված իրավական ռեժիմին հակասող Ի՞նչ գործունեություն է թույլատրվում իրականացնել.

- **ցանկացած գործունեություն արգելվում է.**

19

84. Ո՞ր հողերն են համարվում հատուկ նշանակության.

- **հատուկ նշանակության հողեր են համարվում պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողերը և օրենքով պաշտպանվող շենքերի ու շինությունների օգտագործման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը**

24

85. Ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն նոր հողերի յուրացման նկատմամբ.

- **պետական լիազորված մարմինը.**

41

86. Ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն հողային ֆոնդի նպատակային օգտագործման նկատմամբ.

- **պետական լիազորված մարմինը.** 41

87. Ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն մարզի սահմանանիշերի պահպանման նկատմամբ.

- **համապատասխան մարզպետը.** 42

88. Ի՞նչ է համարվում սեփականատիրոջ կողմից այլ անձի օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրված հողամասի տիրապետման և օգտագործման իրավունքը.

- **հողամասի անհատույց /մշտական / օգտագործում.** 47

89. Ի՞նչ է մեկ կամ մի քանի սեփականատերերի հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունքը.

- **հողամասի սերվիտուտն է.** <O հոդված 50

90. Ինչպիսի՞ սերվիտուտ կարող է լինել հողամասի նկատմամբ.

- **ժամանակավոր և /կամ/ մշտական.** <O հոդված 50

91. Թույլատրվում է պետության և համայնքների բյուջետային և պետական հիմնարկների զբաղեցրած հողամասերի վաճառքը.

- **չի թույլատրվում՝ մինչև սահմանված կարգով դրանց լուծարումը.** 62, 9

92. Ի՞նչ է հողամասի մասնավորեցումը.

- **պետության և համայնքների սեփականության ներքո գտնվող հողերից սեփականության իրավունքով հողամասերի տրամադրումն է քաղաքացիներին և իրավաբանական անձանց** 62, 1

93. Ի՞նչ փաստաթղթերին համապատասխան է իրականացվում կառուցապատված հողամասերի փոխանցումը սեփականության իրավունքով.

- **իրականացվում է քաղաքաշինական համապատասխան՝ նախատեսվող նպատակային նշանակության հաշվառմամբ.** 62, 11

94. Ո՞ր վիճելի հողերը մասնավորեցման ենթակա չեն մինչև համապատասխան որոշման ուժի մեջ մտնելը.

- **որոնց նկատմամբ իրականացվում է դատական վարույթ** 62, 12

95. Ի՞նչ է պարտավոր ներկայացնել քաղաքացին կամ իրավաբանական անձը հողամասի մասնավորեցման համար.

- **հողամասի վրա գտնվող շենքի, շինության բոլոր սեփականատերերի դիմումները.** 62, 13

96. Պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին պետական սեփականության հողերը ի՞նչ կարգով և իրավունքով են տրամադրվում.

- **առանց մրցույթի՝ անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով.** 75, 1

97. Ո՞ր կազմակերպություններին են տրամադրվում պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով.

• **հասարակական կազմակերպություններին.**

75, 1

98. Ու՛մ են անցնում գյուղատնտեսական գործունեության համար տրամադրված հողամասերի վարձակալության ժամկետի ավարտից հետո դրանց վրա կառուցված շենքերը, շինությունները.

• **անցնում են հողամասի սեփականատիրոջը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ**

96, 5

99. Որքա՞ն է սահմանվում համայնքների վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման ժամկետը.

• **մինչև 10 տարի.**

կառ. 14.01.2010թ. N16-Ն որոշում

100. Ո՞վ է կազմում համայնքի յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը.

• **համայնքի ղեկավարը.**

<< կառ. 23.10 2000թ N656 որոշում

101. Ի՞նչ իրավունքով է փոխանցվում համայնքներին որպես սեփականություն փոխանցված գույքին ամրակայված հողը.

• **սեփականության իրավունքով.**

<< օրենք <<Տեղական ինքնակառ. մասին>> հոդ. 49

102. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

• **հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը.**

<Օ հոդված 2, մաս 1, կետ 1

103. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

• **հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը.**

<Օ հոդված 2, մաս 1, կետ 2

104. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

• **հողային բարեփոխումների հայեցակարգի սահմանումը.**

<Օ հոդված 2, մաս 1, կետ 3

105. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

• **հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը.**

<Օ հոդված 2, մաս 1, կետ 4

106. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

• **հողերի բերրիության բարձրացման, օգտագործման և պահպանման, դրանց բնական գյուղատնտեսական շրջանացման հետ կապված գործունեության բնագավառում ծրագրերի և միասնական ներդրումային քաղաքականության իրականացումը.**

<Օ հոդված 2, մաս 1, կետ 5

107. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

• **հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը.**

<Օ հոդված 2, մաս 1, կետ 6

108. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **պետական սեփականության հողերի կառավարումը և տնօրինումը, պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողերի օտարման, օգտագործման իրավունքով տրամադրելու կարգերի, ինչպես նաև թույլատրելի օգտագործման սահմանումը և փոփոխումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1, կետ 7

109. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **համայնքին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերը հասարակության և պետության կարիքների համար օտարումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1, կետ 8

110. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **առանձին նպատակային նշանակության հողերի համար հատուկ իրավական ռեժիմի և օգտագործման նկատմամբ սահմանափակումների սահմանումը.**
ՀՕ հոդված 2

111. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **հողերի օգտագործման և պահպանման, բերրիության բարձրացման ոլորտում միջազգային համագործակցության իրականացումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1

112. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **հողային պաշարների կառավարման լիազոր պետական մարմինների իրավասությունների և գործունեության կարգի, պետական կառավարման այլ մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ նրանց փոխհարաբերությունների սահմանումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1, կետ 11

113. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **հանրապետության ամենամյա հողային հաշվետվության հաստատումը և հրապարակումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1, կետ 13

114. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1, կետ 14

115. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **հողի վճարովիության սկզբունքների, հողի հարկի չափերի և հարկային արտոնությունների սահմանումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1, կետ 15

116. Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը.

- **համայնքների և մարզերի վարչական սահմանների նկարագրության հաստատումը.**
ՀՕ հոդված 2, մաս 1, կետ 16

117. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- **ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում և հաստատում են համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծն ու հողերի օգտագործման սխեման, ինչպես նաև սահմանում և փոփոխում են հողերի նպատակային և գործառնական նշանակությունը՝ կառավարության սահմանած կարգով.**
ՀՕ հոդված 3, կետ 1

118. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- գլխավոր հատակագծին, քաղաքաշինական գոտիավորման նախագծին և հողերի օգտագործման սխեմային համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում ու հետ են վերցնում համայնքին և պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերը.

ՀՕ հոդված 3, կետ 2

119. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- սահմանված կարգով տնօրինում են համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը.

ՀՕ հոդված 3, կետ 3

120. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- իրականացնում են հողերի ընթացիկ հաշվառումը.

ՀՕ հոդված 3, կետ 4

121. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- իրականացնում են հողի հարկի և պետական ու համայնքային հողերի վարձավճարների գանձումը.

ՀՕ հոդված 3, կետ 4

122. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- իրականացնում են հսկողությունը հողամասերի օգտագործման, դրանց նկատմամբ սահմանափակումների պահպանման նկատմամբ.

ՀՕ հոդված 3, կետ 4

123. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- աջակցում են հողերի պետական հաշվառմանը.

ՀՕ հոդված 3, կետ 5

124. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- աջակցում են համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի պահպանության ապահովմանը.

ՀՕ հոդված 3, կետ 5

125. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- աջակցում են բնապահպանական և պատմամշակութային նորմերի կիրառմանը և դրանց ուղղված միջոցառումների իրականացմանը.

ՀՕ հոդված 3, կետ 5

126. Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում.

- աջակցում են անտառային հողերի օգտագործման սխեմաների հանրապետական և տարածքային նախագծերի իրականացմանը.

ՀՕ հոդված 3, կետ 5

127. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- պահանջներ, որոնք ուղղված են հողամասի օգտագործման միջոցների և դրանց այն մասի արգելմանը, որոնք հանգեցնում են հողի որակի ու բերրիության անկմանը կամ շրջակա բնական միջավայրի վատթարացմանը.

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 1

128. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են քաղաքաշինական փաստաթղթերին, նորմերին ու կանոններին համապատասխան կառուցապատման խտությանը, շենքի, շինության բարձրությանը և հողամասի վրա ամրակայման առանձնահատկությանը.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 2

129. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են համապատասխան գոտու կամ հողամասի սահմաններում սոցիալ-մշակութային, կոմունալ-կենցաղային, արտադրական և այլ շենքերի, շինությունների տեղադրմանը.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 3

130. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են մարդու առողջության վրա վնասակար ազդեցություն թողնող կամ դրա վտանգի մեծացման հետ կապված հողօգտագործման ձևերին.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 4

131. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են շրջակա բնական միջավայրի վրա ազդեցության թույլատրելի նորմերին.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 5

132. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են կանաչ տնկարկների պահպանմանը.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 6

133. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են հողերի անապատացման, հողատարման, աղտոտման, ճահճացման, աղակալման և այլ երևույթների կանխարգելման միջոցառումների իրականացմանը.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 7

134. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են հողերի պահպանության և խախտված հողերի վերականգնման միջոցառումների իրականացմանը.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 8

135. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են հողերի վրա բնապահպանական համակարգերի, սանիտարահիգիենիկ պայմանների ամբողջականության, կենսաբազմազանության պահպանման միջոցառումների ապահովմանը.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 9

136. Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը.

- **պահանջներ, որոնք ուղղված են օրենքներով և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերով սահմանված գյուղատնտեսական, քաղաքաշինական, բնապահպանական, պատմական և մշակութային արժեքների ու պատմական միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներին.**

ՀՕ հոդված 8, մաս 2, կետ 10

137. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման ծրագրավորումը և կազմակերպումը՝ անկախ սեփականության սուբյեկտներից ու տնտեսավարման ձևերից.**

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 1

138. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հողամասերը տեղանքում ամրացնելը, հողամասերի հատակագծերի, հողամասի տրամադրման վերաբերյալ փաստաթղթերի նախապատրաստումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 3

139. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հանրապետական, մարզային, համայնքային, միջհամայնքային, ներտնտեսական հողաշինարարական և հողի օգտագործման ու պահպանության այլ նախագծերի մշակումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 4

140. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **խախտված հողերի վերականգնումը, հողաշերտերը ջրային ու հողմային հողատարումից, անապատացումից, ցեխաջրերից, փլուզումներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոնների, ռադիոակտիվ և քիմիական նյութերի ախտահարումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողը պահպանելու և դրա բերրիությունը բարձրացնելու համապետական ու տարածքային ծրագրերի, աշխատանքային նախագծերի մշակումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2

141. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման և դրանց սահմանագծման հիմնավորումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 6

142. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **մարզերի, համայնքների վարչական սահմանների, սեփականատերերի և հողօգտագործողների հողամասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը.**

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 7

143. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հողաշինության գծով տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական, պատմական և մշակութային ու այլ հետազոտական աշխատանքների իրականացումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2

144. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հողային ֆոնդի պետական հաշվառումը, գույքագրումը և չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իր նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի բացահայտումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2

145. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հողային պաշարների վիճակի և օգտագործման կադաստրային ու թեմատիկ քարտեզների և ատլասների կազմումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2

146. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը.**

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 11

147. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- **հողերի մոնիթորինգը.**

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 12

148. Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը.

- նոր հողամասերի կազմավորման, հողամասերի միավորման ու բաժանման, գոյություն ունեցող հողամասերի կարգավորման միջոցառումների իրականացումը.

ՀՕ հոդված 31, մաս 2, կետ 13

149. Որո՞նք են հողերի մոնիթորինգի խնդիրները.

- հողերի վիճակի փոփոխության ժամանակին բացահայտումը, այդ փոփոխությունների կանխատեսումը և բացասական գործընթացների հետևանքների կանխարգելման ու վերացման մասին հանձնարարականների մշակումը.

ՀՕ հոդված 32, մաս 3, կետ 1

150. Որո՞նք են հողերի մոնիթորինգի խնդիրները.

- անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման, հողերի արդյունավետ օգտագործման, հողաշինարարության, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ պետական վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը.

ՀՕ հոդված 32, մաս 3, կետ 2

151. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- հողամասով անցնելու կամ երթևեկելու համար.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 1

152. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- հողամասով էլեկտրահաղորդման, կապի գծերի, ջրամատակարարման և գազամատակարարման խողովակաշարերի անցկացման, շահագործման և վերանորոգման համար.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 2

153. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- այլ հողամասի հողի բարելավման նպատակով հողում դրենաժային աշխատանքներ կատարելու համար.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 3

154. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- հողամասից ջուր վերցնելու համար.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 4

155. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- հողամասով անասունների անցնելու, խոտհնձի, անասուններ արածեցնելու համար՝ տեղական պայմաններին և սովորույթներին համապատասխան ժամանակահատվածում.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 5

156. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- հողամասում ինչպես մասնավոր, այնպես էլ հանրության համար անհրաժեշտ հետախուզական, հետազոտական և այլ աշխատանքներ իրականացնելու համար.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 6)

157. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- հողամասի սահմաններում գտնվող գեոդեզիական կետերին, պատմության, մշակութային և հնագիտական հուշարձաններին անարգել մոտենալու համար.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 7)

158. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- իր հողամասի շենքերը, շինությունները սահմանակից հողամասի կամ դրանում եղած շենքերի, շինությունների վրա հենելու կամ որոշակի բարձրությամբ հարևան հողամասի վրա կախելու համար.

ՀՕ հոդված 50, մաս 3, կետ 8

159. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- սահմանակից հողամասում շենքերի, շինությունների բարձրությունը սահմանափակելու համար. <O հոդված 50, մաս 3, կետ 9

160. Հողամասն ի՞նչ կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով.

- սահմանակից հողամասում պաշտպանական անտառատնկարկներ կամ այլ բնապահպանական օբյեկտներ ստեղծելու համար.

<O հոդված 50, մաս 3, կետ 10)

161. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող որ հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- այն հողամասերը, որոնք պատմական և մշակութային արժեքների օբյեկտներ են.

<O հոդված 60, կետ 1)

162. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- այն հողամասերը, որոնք բնության հատուկ պահպանվող տարածքներից պետական բնական արգելոցներ են, բնության պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ, ազգային զբոսայգիներ, ծառաբանական զբոսայգիներ, բուսաբանական այգիներ, ինչպես նաև այդ նպատակների համար պահեստավորված տարածքներ.

<O հոդված 60, կետ 2)

163. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- այն հողամասերը, որոնք օրենքով պաշտպանվող սանիտարական պահպանության տարածքների սահմանների շրջանում բուժիչ-առողջարանային վայրեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.

<O հոդված 60, կետ 3

164. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- այն հողամասերը, որոնք զբաղեցված են պետական սեփականություն հանդիսացող անտառով.

<O հոդված 60, կետ 4

165. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- այն հողամասերը, որոնք պետական մեխորատիվ համակարգերի կամ ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.

<O հոդված 60, կետ 5

166. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- այն հողամասերը, որոնք բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ).

<O հոդված 60, կետ 6

167. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- **այն հողամասերը, որոնք պետության կողմից հաշվառված և գրանցված օգտակար հանածոների տեղադրվածություններ են.** <O հողված 60, կետ 7

168. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- **այն հողամասերը, որոնք ենթարկված են ռադիոակտիվ և քիմիական աղտոտման, կենսածին վարակման.** <O հողված 60, կետ 8

169. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- **այն հողամասերը, որոնք կառավարության սահմանած ցանկով տրամադրված են պետական գիտահետազոտական կազմակերպություններին (կրթական, սելեկցիոն և այլն)՝ մինչև սահմանված կարգով դրանց լուծարումը.** <O հողված 60, կետ 9

170. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- **այն հողամասերը, որոնք ջրային օբյեկտների և ավազանների առափնյա շերտերի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհների, խողովակաշարային և այլ տրանսպորտի համար առանձնացված շերտերի, էլեկտրահաղորդիչ գծերի, մայրուղային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազատարների, ջրանցքների, ինչպես նաև դրանց հեռանկարային զարգացման համար առանձնացված (պահեստավորված) հողեր են.**

<O հողված 60, կետ 11

171. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- **այն հողամասերը, որոնք վիճելի տարածքներ են՝ մինչև վեճերի լուծումը.** <O հողված 60, կետ 12)

172. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց.

- **այն հողամասերը, որոնք հատուկ նշանակության հողեր, զինվորական և քաղաքացիական գերեզմանոցներ են.** <O հողված 60, կետ 13

173. Պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող և քաղաքացիների ու իրավաբանական անձանց մոտ օգտագործման (մինչև դրա ժամկետի լրանալը) իրավունքով գտնվող հողամասերը կարո՞ղ են օտարվել այլ անձի.

- **չեն կարող օտարվել այլ անձի, եթե սահմանված կարգով չի լուծվել պայմանագիրը.** <O հողված 62, մաս 2)

174. Հողամասի սահմանները սեփականատիրոջ կամ օգտագործողի ցանկությամբ կարո՞ղ է սահմանազատվել սահմանանիշերով.

- **հողամասի սահմանները սեփականատիրոջ կամ օգտագործողի ցանկությամբ և նրանց միջոցների հաշվին կարող են տեղանքում սահմանված կարգով սահմանազատվել սահմանանիշերով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության, տնամերձ և այգեգործական հողերի, որոնց սահմանների ամրացման կարգը սահմանում է պետական լիազորված մարմինը.** <O հողված 62, մաս 5

175. Հողամասի մասնավորեցման համար ի՞նչ է պարտավոր ներկայացնել քաղաքացին կամ իրավաբանական անձը .

- **հողամասի վրա գտնվող շենքի, շինության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ փաստաթուղթը, եթե հողամասը կառուցապատված է.**

ՀՕ հոդված 62, մաս 13, կետ 1)

176. Հողամասի մասնավորեցման համար ի՞նչ է պարտավոր ներկայացնել քաղաքացին կամ իրավաբանական անձը .

- **հողամասի օգտագործման իրավունքի գրանցման փաստաթղթերը.**

ՀՕ հոդված 62, մաս 13, կետ 2)

177. Հողամասի մասնավորեցման համար ի՞նչ է պարտավոր ներկայացնել քաղաքացին կամ իրավաբանական անձը .

- **սահմանված կարգով կազմված հողամասի հատակագիծը.**

ՀՕ հոդված 62, մաս 13

178. Գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ու՞մ են տրամադրվում.

- **սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, երկրաշարժից տուժած և լքված բնակավայրերում (ցանկը հաստատում է կառավարությունը) այն ընտանիքներին, որոնք նախկինում չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, չեն ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հողամասեր.**

ՀՕ հոդված 64, մաս 1, կետ 1)

179. Գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ու՞մ են տրամադրվում.

- **ՀՀ բնակվող այն ընտանիքներին, որոնք ցանկություն են հայտնում մշտական բնակություն հաստատել սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, երկրաշարժից տուժած և լքված բնակավայրերում (ցանկը հաստատում է կառավարությունը).**

ՀՕ հոդված 64, մաս 1, կետ 2)

180. Գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ու՞մ են տրամադրվում.

- **ՀՀ կառավարության որոշմամբ վերաբնակեցվածներին.**

ՀՕ հոդված 64, մաս 1, կետ 3)

181. Գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ու՞մ են տրամադրվում.

- **հողի սեփականաշնորհում իրականացրած համայնքներում բնակվող՝ զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձանց, չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքներին, որոնք չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, նախկինում չեն ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հողամաս.**

ՀՕ հոդված 64, մաս 1, կետ 4)

182. Գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ու՛մ են տրամադրվում.

- **բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող այն բռնադատվածներին, ովքեր չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, նախկինում չեն ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար չծանրաբեռնված հողամաս այն բնակավայրերում, որտեղ նրանք բնակվել են բռնադատման պահին.**

ՀՕ հոդված 64, մաս 1, կետ 5)

183. Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը ու՛մ է կատարվում.

- **իրավաբանական անձանց և քաղաքացիներին կամ նրանց իրավահաջորդներին՝ մասնավորեցված ձեռնարկությունների ու սեփականաշնորհված սակավաբնակարան շենքերի ու շինությունների պահպանման և սպասարկման համար.**

ՀՕ հոդված 66, մաս 1, կետ 1)

184. Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը ու՛մ է կատարվում.

- **ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին՝ դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների համար.**

ՀՕ հոդված 66, մաս 1, կետ 2)

185. Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը ու՛մ է կատարվում.

- **ՀՀ քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ պետական սեփականությանը պատկանող այն հողամասերը, որոնք մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելն օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվել են օգտագործման՝ բնակելի, հասարակական կամ արտադրական նշանակության շենքերի, շինությունների կառուցման և սպասարկման նպատակով.**

ՀՕ հոդված 66, մաս 1, կետ 3)

186. Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը ու՛մ է կատարվում.

- **օրենքներով և պայմանագրերով գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց.**

ՀՕ հոդված 66, մաս 1, կետ 4)

187. Ի՞նչ նպատակով և ինչպե՞ս է կատարվում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը.

- **սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով պետության սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ.**

ՀՕ հոդված 66, մաս 1, կետ 5)

188. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով սեփականատերերի միջև ի՞նչ նպատակով է կատարվում.

- **հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով.**

ՀՕ հոդված 71, մաս 1, կետ 1)

189. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով սեփականատերերի միջև ի՞նչ նպատակով է կատարվում.

- **հողամասի սեպածնությունը, մասնատվածությունը, կտրտվածությունը վերացնելու նպատակով.** <O հոդված 71, մաս 1, կետ 2)

190. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով սեփականատերերի միջև ի՞նչ նպատակով է կատարվում.

- **հողամասը միավորելու կամ բաժանելու նպատակով.** <O հոդված 71, մաս 1

191. Ինչպե՞ս և ու՞մ միջոցով է կատարվում պետության սեփականությանը պատկանող հողամասերի փոխանակությունը.

- **պետության սեփականությանը պատկանող հողամասերի փոխանակությունը կատարվում է կառավարության սահմանած կարգով՝ լիազորված մարմնի միջոցով.** <O հոդված 71, մաս 2)

192. Ո՞վ է կատարում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի փոխանակությունը.

- **համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ՝ հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան.** <O հոդված 71, մաս 3

193. Պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման ու՞մ են տրամադրվում.

- **պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին.** <O հոդված 75, մաս 1, կետ 1

194. Պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման ու՞մ են տրամադրվում.

- **բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.** <O հոդված 75, մաս 1, կետ 2

195. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման տրամադրելու վերաբերյալ հայտին ի՞նչ փաստաթղթեր են կցվում.

- **մշտական օգտագործման իրավունքով հողամաս ձեռք բերելու մասին լիազորված մարմնի որոշումը.** <O հոդված 75, մաս 2, կետ 1

196. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման տրամադրելու վերաբերյալ հայտին ի՞նչ փաստաթղթեր են կցվում.

- **հողամասը ձեռք բերելու նպատակը և պահանջվող հողատարածության չափը.** <O հոդված 75, մաս 2, կետ 2)

197. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման տրամադրելու վերաբերյալ հայտին ի՞նչ փաստաթղթեր են կցվում.

- **քաղաքաշինական գործունեություն ծավալելու դեպքում ֆինանսական միջոցներով ապահովված լինելու վերաբերյալ համապատասխան բանկի հաստատած տեղեկանքը.** <O հոդված 75, մաս 2, կետ 3)

198. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման տրամադրելու վերաբերյալ հայտին ի՞նչ փաստաթղթեր են կցվում.

- **Եթե պահանջվող հողամասը գտնվում է այլ անձի օգտագործման ներքո, հողօգտագործողի գրավոր համաձայնությունը.** <O հոդված 75, մաս 2, կետ 4

199. Հողամասը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով ու՞մ է տրամադրվում.

- **ՀՀ քաղաքացիներին.** <O հոդված 76, մաս 4, կետ 1

200. Հողամասը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով ու՞մ է տրամադրվում.

- **ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձանց.** <O հոդված 76, մաս 4, կետ 2)

201. Հողամասը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով ու՞մ է տրամադրվում.

- **օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց.** <O հոդված 76, մաս 4, կետ 3)

202. Հողամասը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով ու՞մ է տրամադրվում.

- **օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին.** <O հոդված 76, մաս 4, կետ 4)

203. Ի՞նչ պետք է ներառեն մրցույթի պայմանները.

- **հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը.** <O հոդված 77, մաս 2, կետ 1)

204. Ի՞նչ պետք է ներառեն մրցույթի պայմանները.

- **հողամասի չափը և վարձակալության և (կամ) կառուցապատման ժամկետները.** <O հոդված 77, մաս 2, կետ 2)

205. Ի՞նչ պետք է ներառեն մրցույթի պայմանները.

- **հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը.** <O հոդված 77, մաս 2, կետ 3)

206. Ի՞նչ պետք է ներառեն մրցույթի պայմանները.

- **օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը.** <O հոդված 77, մաս 2, կետ 4)

207. Ի՞նչ պետք է ներառեն մրցույթի պայմանները.

- **հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը.** <O հոդված 77, մաս 2, կետ 5)

208. Ի՞նչ պետք է ներառեն մրցույթի պայմանները.

- **գյուղատնտեսական հողատեսքերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները.** <O հոդված 77, մաս 2, կետ 6)

209. Ի՞նչ պետք է ներառեն մրցույթի պայմանները.

- **բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները.** <O հոդված 77, մաս 2, կետ 7)

210. Գյուղատնտեսական նշանակության հողերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով ի՞նչ նպատակով են տրամադրվում.

- **գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, գիտահետազոտական և ուսումնական.** <O հոդված 91, մաս 1, կետ 1)

211. Գյուղատնտեսական նշանակության հողերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով ի՞նչ նպատակով են տրամադրվում.

- **խոտհնձի և անասունների արածեցման.** <O հոդված 91, մաս 1, կետ 2)

212. Գյուղատնտեսական նշանակության հողերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով ի՞նչ նպատակով են տրամադրվում.

- **գյուղատնտեսական արտադրական շենքերի, շինությունների կառուցման.** <O հոդված 91, մաս 1, կետ 3)

213. Գյուղատնտեսական նշանակության հողերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով ի՞նչ նպատակով են տրամադրվում.

- **բացառիկ դեպքերում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի, շինությունների կառուցման ու սպասարկման և օրենսդրությամբ չարգելված այլ գործողությունների իրականացման նպատակներով.** <O հոդված 91, մաս 1, կետ 4)

214. Վարձակալը, առանց վարձատուի համաձայնության ինչի՞ր իրավունք չունի.

- **հողամասը տրամադրել ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով.** <O հոդված 94, մաս 5, կետ 1)

215. Վարձակալը, առանց վարձատուի համաձայնության ինչի՞ր իրավունք չունի.

- **հողամասը լիովին կամ մասնակիորեն տրամադրել գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձին՝ համատեղ օգտագործման նպատակով.** <O հոդված 94, մաս 5, կետ 2)

216. Վարձակալը, առանց վարձատուի համաձայնության ինչի՞ր իրավունք չունի.

- **փոխել հողամասի նպատակային նշանակությունը, հողատեսքը.** <O հոդված 94, մաս 5, կետ 3)

217. Վարձակալը, առանց վարձատուի համաձայնության ինչի՞ր իրավունք չունի.

- **հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքը գրավադրել.** <O հոդված 94, մաս 5, կետ 4)

218. Վարձակալը, առանց վարձատուի համաձայնության ինչի՞ր իրավունք չունի.

- **կատարել բարելավումներ.** <O հոդված 94, մաս 5, կետ 5)

219. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **հողամասից կամովին հրաժարվելու դեպքում.** <O հոդված 100, մաս 1)

220. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **հողամասն օտարելիս.** <O հոդված 100, մաս 1, կետ 2)

221. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **սեփականատիրոջ մահվան դեպքում, եթե չկան ժառանգներ.** <O հոդված 100, մաս 1

222. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **հողամասը հասարակության և պետության կարիքների համար օտարելիս.** <O հոդված 100, մաս 1, կետ 4)

223. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **հողամասի ռեկվիզիցիայի կամ բռնագրավման դեպքում.** <O հոդված 100, մաս 1, կետ 5)

224. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **օրենսդրության խախտմամբ օգտագործվող հողամասը հարկադիր վերցնելու դեպքում.** <O հոդված 100, մաս 1, կետ 6)

225. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **իրավաբանական անձի լուծարման (վերակազմակերպման) դեպքում.** <O հոդված 100, մաս 1, կետ 7)

226. Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները.

- **հողամասի վրա դրա սեփականատիրոջ պարտավորություններով բռնագանձում տարածելիս.** <O հոդված 100, մաս 1, կետ 8

227. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **հողամասի օգտագործումը ոչ նպատակային նշանակությամբ կամ օրենքով և այլ իրավական ակտերով չթույլատրված եղանակով.** <O հոդված 102, կետ 1

228. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի սահմանած ժամկետներում օրենսդրության թույլ տրված խախտումները չվերացնելը.** <O հոդված 102, կետ 2

229. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **գյուղատնտեսական նշանակության հողամասը երեք տարվա ընթացքում չօգտագործելը՝ հողամասի յուրացման, մելիորատիվ շինարարության, տարերային աղետներից հետո վերականգնման և նման օգտագործումը բացառող այլ հանգամանքների վերացման համար անհրաժեշտ ժամկետի հաշվանցով.** <O հոդված 102, կետ 3

230. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **կառուցապատման համար տրամադրված հողամասը կամ դրա մասը երեք տարվա ընթացքում չօգտագործելը, եթե պայմանագրով նախատեսված չեն շինարարության ավարտի ավելի երկարատև ժամկետներ.**
ՀՕ հոդված 102, կետ 4

231. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելը և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելը.**
ՀՕ հոդված 102, կետ 5

232. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **հողամասի ռեկվիզիցիան.**
ՀՕ հոդված 102, կետ 6

233. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **հողամասի բռնագրավումը.**
ՀՕ հոդված 102, կետ 7

234. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **հողամասը հասարակության և պետության կարիքների համար օտարելը.**
ՀՕ հոդված 102, կետ 8)

235. Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցման՝ դատական կարգով.

- **հողամասի վրա բռնագանձում տարածելը՝ դրա սեփականատիրոջ պարտավորություններով.**
ՀՕ հոդված 102, կետ 9)

236. Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում.

- **ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների անվանումը, հիմնական ցուցանիշները (տարածքը, հողային ֆոնդի փաստացի բաշխումը, բնակչության թիվը, ռեսուրսների հիմնական տեսակները, զարգացման հիմնական հեռանկարները).**

02.05.03թ N625 –Ն որոշում

237. Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում.

- **տվյալներ նախկինում մշակված քաղաքաշինական և հողաշինարարական ծրագրային փաստաթղթերի մասին.**
02.05.03թ N625 –Ն որոշում

238. Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում.

- **տվյալներ նախկինում իրականացված տեղագրական հանույթների, ինժեներաերկրաբանական, երկրաբուսաբանական, հողագիտական հետազոտությունների մասին.**
02.05.03թ N625 –Ն որոշում

239. Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում.

- **հողերի օգտագործման նկատմամբ գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող պահանջները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

240. Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում.

- **ինժեներաերկրաբանական նախապատրաստմանը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության և սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներին, հողերի պահպանությանը ներկայացվող հիմնական պահանջները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

241. Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում.

- **սխեմայի գրաֆիկական ու տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները (գծագրերի թիվը՝ համապատասխան մասշտաբներով, տեքստային մասի կազմը և ծավալը).**

02.05.03թ N625 –Ն որոշում

242. Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում.

- **նոր հողերի յուրացման, բարելավման, կուլտուր-կենցաղային և այլ միջոցառումների իրականացման հնարավորությունները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

243. Ի՞նչն է օգտագործվում որպես սխեմայի մշակման հանութային հիմք.

- **սխեմայի մշակման համար որպես հանութային հիմք օգտագործվում են համապատասխան բնագավառի լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով հաստատված տեղագրական հանույթները, ինժեներաերկրաբանական, միկրոսեյսմաշրջանացման, կադաստրային և հողաշինարարական քարտեզները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

244. Ո՞րն է նշվում սխեմայի տեքստային մասում.

- **սխեմայի մշակման հիմքերն ու ելակետային տվյալները, դրանք տրամադրող մարմիններն ու կազմակերպությունները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

245. Ո՞րն է նշվում սխեմայի տեքստային մասում.

- **նախկինում մշակված հողաշինարարական և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի հետ փոխադարձ կապը.**

02.05.03թ N625 –Ն որոշում

246. Ո՞րն է նշվում սխեմայի տեքստային մասում.

- **հողօգտագործման նկատմամբ գյուղատնտեսական, բնապահպանական, քաղաքաշինական, սեյսմապաշտպանական, պատմամշակութային սահմանափակումների բնույթն ու հիմնավորումները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

247. Ո՞րն է նշվում սխեմայի տեքստային մասում.

- **գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման, բարելավման, պահպանման, արդյունավետության բարձրացման միջոցառումները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

248. Ո՞րն է նշվում սխեմայի տեքստային մասում.

- **պետական սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակության փոփոխման հիմնավորումները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

248. Ո՞րն է նշվում սխեմայի տեքստային մասում.

- **նոր հողերի յուրացման, բարելավման կուլտուր-տեխնիկական, ինչպես նաև հողերի և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները.**

02.05.03թ N625 –Ն որոշում

250. Ի՞նչ միջոցառում է ներառում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը.

- **հողամասի (հողամասերի) հանութագրում.**

03.02.05թ N 125-Ն որոշում

251. Ի՞նչ միջոցառում է ներառում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը.

- **հողամասի (հողամասերի) հատակագծերի նախապատրաստում.**

03.02.05թ N 125-Ն որոշում

252. Ի՞նչ միջոցառում է ներառում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը.

- **հողամասերի սահմանների տեղափոխում բնության մեջ և դրանց ամրացում.**

03.02.05թ N 125-Ն որոշում

253. Ի՞նչ միջոցառում է ներառում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը.

- **հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու՝ հրապարակային սակարկության կազմակերպման համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի փաթեթի նախապատրաստում.**

03.02.05թ N 125-Ն որոշում

Հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի N 373-Լ հրամանով: